

ՓԱՅԼԱԿ ԱՆԹԱԲՅԱՆ

## ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑՈՒ «ԺՈՂԱՆՔԸ»

«Ժղլանք» Վարդան Արեկելցու ամենառուշագրավ ստեղծագործություններց է: Չեռազրերում այն հետեւյալ խորապիրն ունի. «Հումանությունը ի ս. Գրոց Վարդանաց վարդապետի ի խնդրոյ բարեպաշտ թափառքին Հայոց Հեթմոյ»<sup>1</sup>: Սակայն, հետագայում, մեր մատենագրության և բանասիրության մեջ, այն հիշատակվում է «Ժղլանք» անունով: Այս բառը, որ միջնադարյան հայերենում նշանակել է զրուց՝ զրուանք, մանր զիտելիք<sup>2</sup>, տանված է հեղինակի հիշյալ աշխատության մեջ զետեղված հիշատակարանից: Այսուղ նա հայտնում է, որ ինքը մի քանի մեկնողական բնույթի նյութերից հետո գրել է ժղլանքներ: Մենք էլ պահում ենք «Ժղլանք» անունը, նկատի ունենալով, որ այն ավելի է պատշաճում այս աշխատությանը և ավելի ճիշտ է բնորոշում նրա էությունը<sup>3</sup>:

Կիլիկիայի հայկական թագավորության պալատական շրջանակների ավանդական մի սովորության համաձայն, ամեն օր մի հոգևորական ներկայացել է պալատ և «ռամկորեն» զրուցել թագավորների և իշխանների հետ դաստիարակի, զրուց և, խոստովանահոր ու պետական խորհրդատուի հանգամանքով: XIII դարում Կիլիկիայում եղած դոմինիկյան միաբանության անդամ Բուրկարդուս զի Սանտե Մոնտեն իր Ուղեգրության մեջ այս մասին արձանագրել է հետեւյալ մանրամասնությունը, որը մեջ ենք բերում ստորև. «...թագավորական տան անդամները, իշխանները և բոլոր ազնվականները սիրով են յսում աստուծո խոսքը: Դրա համար է, որ յուրաքանչյուր օր ժամը 3-ին մի վարդապետ կամ վանական գալիս է թագավորի ու իշխաններից յուրաքանչյուրի ամրոցը. զրանց մատենում է միշտ իշխանը ինքը, մենակ կամ թե զավակների ու անեցիների հետ միասին: Վանականները զնում են առաջները որևէ մի գիրք և կարդում նրանց ներկայությամբ ռամկորեն (in vulgari), որովհետև ուրիշ լեզու չգիտեն, կամ թե բացատրում նրանց դոցա բնագիրը, և, եթե աշխարհականները որևէ տեղ կատած ունեն, առաջադրում են հարցեր և ստանում վանականներից զրանց մեկնարանությունը սրբոց ցուցմունքների համաձայն»<sup>4</sup>:

Զափազանց հետաքրքիր այս երեւյթի արգասիք է մեր կողմից քննարկվող աշխատությունը, որն իր տեսակով եղակի է մեր մատենագրության մեջ:

<sup>1</sup> Մաշտոցյան մատենագարան, ձեռ. № 750, էջ 1ա, 8132, էջ 1ա և այլն:

<sup>2</sup> Հ. Ա. առ յան, Հայերեն արմատական բառարան, Երևան, 1930, հ. 9, էջ 42:

\* «Ժղլանք» ամբողջությամբ կամ հատվածաբար առկա է Մաշտոցյան մատենագարանի բազմաթիվ ձեռագրերում: Սույն հոդվածի մեջ այս կամ այն առիթով խոսք կլինի նբանցից միայն մի քանի մասին, որոնք կամ ժամանակադրականորեն ավելի հին են, կամ էլ «Ժղլանք» բնորդում են համեմատարար ավելի ամբողջական:

<sup>3</sup> «Արարատ», 1914, նոյեմբեր, էջ 1016:

Այդ ուղեգրության կիլիկիան Հայաստանին վերաբերող մասը թարգմանել է Աշոտ Հավհան- նիսյանը:

Ելնելով նրա հարուստ և բազմազան բովանդակությունից, արծարծված հարցերի բնույթից ու արժեքից, կարելի է հեշտությամբ եղբակացնել, թե այդ դրույցները որքան բովանդակալից, հետաքրքիր, կարենոր և օգտակար են եղել: Վերը բերված վկայության մեջ թեև ասված է, որ զրուցների ժամանակ լսում էին միայն «աստծո խոսքը» և ո. զրքերի մեկնությամբ զբաղվում, սակայն «Ժղանքի» օրինակով կարող ենք հետեւնել, որ այդ զրուցների թեմաները բազմաթիվ բնագավառներ էին շոշափում:

Ե՞րբ և որտեղ է Վարդան Արևելցին գրել «Ժղանքը»: Այս հարցին ամենայն որոշակիությամբ պատասխանել չենք կարող, որովհետեւ բացահայտ տվյալներ չունենք: Նրան ուղղակիորեն առնչվում է միայն «Ժղանքին» առընթեր հեղինակի հիշատակարանը, որը մեջ ենք բերում ամբողջությամբ<sup>4</sup>:

«Այսպէս արա և զու. սակաւ մի աշխատեա, քո սակաւ աշխատիլն զայլոց շատն արժէ, զի որպէս լուաք ի Թրիստոսէ ամէն մարդոյ հրեշտակ կա պահապան, և ձեղ, որ աղզի զլուխ և թագաւոր էք, ինքն՝ զլուխն Թրիստոս է պահապան և անմեկնելի: Մի՛ պաշտէր զնա որպէս հեռաւոր, այլ որպէս առ քեզ, ի սրբադիր և յոգուշդ, ուր կամիս զգլուխու և զերեսա զնելի պատիւննա ի գիրկն զնես և յաստուած միանաս, և զոգի իմ տառապեալ և տկար յիշեսցես, որ զքեզ սիրէ տռաւել քան զասել: Վասն որոյ զայս աշխատութիւն տկար մարմնով կատարեցի սիրով ձեր զաւրացեալ և աւժանդակեալ. և յիշեա՛, զոր ի ձեռն Թորոսի հրամայեցիք վասն եղարերից կանանցն զրել ձեղ և ի խորհուրդ պատարագին, և ապա երեսաւոր յԱնդուն հրամայեցիք, որ գրեաք ձեղ ժղանք ի մեկնութենէն քերականին: Եւ ես այլ յաւելի սիրով զրել ձեղ ձեռամբ լուծմունս յԱւետարանէն և յԱրարածոցն: Ուստի տեսէք թէ շատ էիք հարցանել և սիրէք սրտիւ, է որ հանգուցանէ զձեր միտքդ և է իմանաս (՝), որ պատճառ լինի ձեղ բանաւորութեան<sup>5</sup> զայս հարցանելոյ և զտոյզն զտանել: Բայց աղաշեմ զպարզամիտ մարդ և զառաքինի մի՛ հարցանել, որ շամաշէն, զի ես նախահոգութեամբ զրեցի և թէ առ ժամն զիս հարցանեն և ես զտանիմ տկարացեալ, վասնորոյ մի՛ մեղազրեր ժամուն շգտանաւզաց զտեսութիւն բանին: Եւ ես զիտեմ այս չէ թագաւորական իրք, այլ ոսկեզիր պիտէր և ձարտար զրշի: Եւ ես շատ պատճառ ունէի, որ խափանէր զիս յայս ձեռնարկութենէս. տկարութիւն և մութն ի խրճիթս և հողմ Պարիսարու փոշէխառն փշելով ընդ պատուհանս և պաղ աւզոյս, բայց սիրովն հրաշագործիւ յաղթահարեալ եղեն պատճառքն, և, որպէս տեսանէք, եղեւ: Թէ կամիս զիւրին է տալ փոխել ի լաւ, որ հեշտ կարդայք և թող Գրիգորէսն\* փոխէ, որ բան շկորնչի: Բայց իմ կամ է, որ իմ մատանցս սատարն մնաւ առ ձեղ, ո զիտեն թէ աւելի շնախաւոր լինի ձեղ վասն սիրոյն իմոյ որ առ տէր և սիրոյն որ առ ձեղ, զի յայնց ճառ պատմութիւն չէ, որ շատ աշխատանք տանին և ապա բան զտանեն: Թէ թուղթ մի կարդաս ժամուն կամ՝ թ, զրտանես յոլով խորհուրդս և աշաւասիկ աղահասակ և մտաւոր և աշաւր զաւրաւոր էք, և մի անգամ կարդալն և սակաւ ինչ աշխատիք և յայլն անհոգ լինիք, և զի ար-

<sup>4</sup> Մաշտոցյան մատենադարանի N 750 ձեռագրում սույն հիշատակարանը թերի է, ալդ պատճառով բաղել ենք N 341 ձեռագրից, էջ 103ա: Առաջինում սկիզբն այսպես է. «...Ամ յայնց արա, իմ պարոն...», էջ 125բ:

<sup>5</sup> N 2544 ձեռագրում՝ շիբ:

\* Հավանաբար Կոստ. կաթողիկոսի մյուս եղբար որդին է, Թորոսի հորեղբար տղան, որը Հեթում Ա-ի մոտ պալատական պաշտօնյա էր: Տե՛ս Հ. Ա. Յանձնանուններից բառարան, Սրբան, 1942, հ. Ա, էջ 577:

քառուհի և արքա<sup>6</sup> ի միում մարմնի տեսանի և հասարակ է հոգևորն և մարմնաւորն: Եւ թէ ահաւասիկ իրք մի աւգուտ լինի ի գրելոցդ կամ մխիթարութիւն երկուցդ լիցի և զակնտ բազմագոյն և պայծառ, որ պասկէ զձեզ յափտեան: Թո՛ղ թագուհին պահն և ի ափտոյ ժամն առնոյք ի նմանէ, և նմա՛ Հրամա[յ]է Պաւու հարցանել զձեզ և զպատշաճն ծանուցանել, և պարտական են, ասէ, ապրեցուցանելոյ զերեարս առն և կնոջ: Եւ զերկոսինսդ ապրեցուցէ տէր Յիսուս կենդանութիւն ձեր ի խնամս հաւը և ի գութ հոգւոյն սրբոյ՝ յոռոգումն աննդեան դալարարձակ, տնկարողրոջ, շառաւեղեալ ոստոցդ, ծիրանածին տղայոցդ ի զիրկս Սիոնի[ի] սրբոյ, ի կատարումն պսակման հայակոյտ աղնւական ազգաց և աղանց, տոհմից ազատաց, ազատեցուցիչք արեանառու զարմից, լծաղիրք և բեռնարարձաւոք, կորացուցիչք աւտարաց ազգաց, ի փառս փառաւոր և պաշտեցեալ աստուածութեան, որ է աւրհնեալ յափտեանս, ամէն»<sup>7</sup>:

Ինչպիս նկատում ենք այստեղ բավական մանրամասնություններ կան «Ժղվանքի» գրության վերաբերյալ, սակայն թվականն ու վայրը շեն հիշատակված: Նշված է միայն մի տեղանուն՝ Անդուլ, որը Դ. Ալիշանի ենթադրությամբ «Կիլիկիո վանքերնե մեկն է ոչ շատ ծանոթ»<sup>8</sup>:

Որ Կիլիկիայում է Վարդան Արեւելցին զրել «Ժղվանքը», անտարակույս է: Սակայն ե՞րբ և ո՞ր որոշակի վայրում: Բանասիրության մեջ ընդհանուր կարծիք շկա այս հարցում: Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ նա Կիլիկիայում 5 տարի մնալուց հետո Հայաստան է եկել 1246 թ. իր հետ բերելով Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի հայտնի շրջաբերական թուղթը:

Գրավոր որոշ տվյալներ հիմք են տալիս ասելու, որ նա Հայաստանից վերստին Կիլիկիա է գնացել և այնտեղ ապրել գոնե մինչև 1251 թ.<sup>10</sup>: Սակայն «Ժղվանքը» ունետք է գրված լինի ոչ ուշ 1246 թ., քանի որ նրա ամենավերջին նյութերից մեկը՝ Հեթում Ա-ին ուղղված թուղթը, գրված է 1246 թ.<sup>11</sup>:

«Ժղվանքի» գրության վայրը նշելու համար շատ կարևոր է նախապիս ճըշտել, թե նրա հեղինակը Կիլիկիայում որտեղ կամ որ վանքում է ապրել: Հայտնի է, որ Վարդանը Կիլիկիայում մնացել է կաթողիկոսի խնդրանքով, որպեսզի յավագույնս օգտվեին նրա բազմահարուստ գիտելիքներից: Նա այնտեղ գործուն մասնակցություն է ունեցել տեղի հասարակական-եկեղեցական և մշակութային կյանքին, մշտական և սերտ համագործակցության մեջ է եղել կաթողիկոսի և թագավորի հետ: Պարզ է, որ նա այս բոլորը անել չեր կարող, եթե մեկուսացած լիներ մի ինչ որ անհայտ վանքում:

Գիտենք նաև որ «Ժղվանքը» գրվել է Հեթում Ա-ի խնդրանքով, բայց Թորոս բահանայի անմիջական միջնորդությամբ, որը Հոռմելայում 1253 և 1262 թթ.<sup>12</sup> գրել է տվել երկու ավետարան: Նա ապրել ու գործել է կաթողիկոսանիստ

6 Զեռ. Ա 341, էջ 104ա լուսանցքում է գրված «և արքան»:

7 Զեռ. Ա 341, էջ 103աւ, Հմմտ. Դ. Ա իշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 469:

8 Դ. Ա իշան, Հայապատում, էջ 470, ծնթ. 1:

9 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 298:

10 Լ. Խաչիկյան, Կոստանդին Բարձրբերդցու խրատական թուղթը, «Բանքեր մատենադարանի», 1958, Ա 4, էջ 269:

11 «Գիրք թղթոց», Բիբլիս, 1901, էջ 503: Այս թղթի գրաւթյան թիվը երրեմն շփոթվել է: Նրանում գրված ՌՄԵԾ (1248) թվահամարի հիման վրա կարծել են, թե այն գրվել է 1248 թ.: Սակայն նրա խորագրում պահպանված հայկական ՌՀԵ թիվը ցույց է տալիս, որ այն հենց այս թիվն (1246) էլ գրվել է և թյուրիմացությունը դալիս է փրկարակն թիվը: Մառացի ընդունելու հաճախաղեալ շփոթությունից:

12 Հ. Ա ճառագ, Հայոց անձնանունների բառարան, Երևան, 1944, Ա. Բ, էջ 351:

այս վանքում: Այստեղ էլ մտերմական կապ է ստեղծվում մի կողմից՝ նրա և Վարդանի, մյուս կողմից թագավորի, կաթողիկոսի, Վարդանի և իր միջև:

Ինչ վերաբերում է վերը հիշատակված Անդուլ վանքին, որը միաժամանակ եղել է Հեթում Ա. թագավորի և Զապել թագուհու «Հովանոցը» Սիս քաղաքից ոչ հեռու մի վայրում<sup>13</sup>, հնարավոր է, որ Վարդան Արեւելցին միաժամանակ հյուր-ընկալված լիներ նաև այնտեղ և վերոհիշյալ հիշատակարանի «Երեսաւը յԱնդուլն հրամայեցիք» խոսքերի մեջ ակնարկ լինի այդ մասին: Գուցե և Հեթում Ա.-ն այստեղ է ներկայացրել «Ժղլանքը» զրել տալու իր խնդիրը:

Վերոհիշյալներից բացի Կիլիկիայի ոչ մի այլ վանքի անուն չի առնչվում Վարդան Արեւելցու զործունեության հետ: Հետևաբար «Ժղլանքի» զրության վայրը կարող էր լինել Հառմելան, թերեւ նաև՝ Անդուլ վանքը:

«Ժղլանքը» հավաքական բնույթի երկասիրություն է:

Այն մեր առաջին փոքրիկ հանրագիտարանն է, իհարկե, այս բառի ոչ ներկա առումով: Այնտեղ բննության ևն առնվել, մեկնվել, վերաբիմաստավորվել գրեթե այն բոլոր հարցերը, որոնք զրազեցրել են ժամանակակից մարդու միտքը և հուզել հոգեկան աշխարհը: Խոսքը վերաբերում է բնության, երկնային մարմինների ծագման ու շարժման, բուսական ու կենդանական աշխարհի առաջացման, մարդկային բնության, իմացության, լեզվի, քերականական գիտելիքների, դրի, երաժշտության, կրոնա-բարոյագիտական, եկեղեցագիտական, գավանարանական և այլ բազմաթիվ հարցերին:

Ժանրային առումով էլ այն բաղմազան է, ունի լուծմունքներ, հականտություններ, հարց ու պատասխանիք, քերականագիտական և պատմական բնույթի նյութեր, գեղարվեստական արձակի նմուշներ և այլն: Հակառակ Ոսկեփորիկների հետ ունեցած իր ձեւական, կառուցվածքային նմանության, այն բոլորունին էլ Ասկեփորիկ չէ, ինչպես կարծել են ոմանք<sup>14</sup>: Իր բնույթով, թեմատիկայի բնգգրկմամբ, պարզ ոճի և «ուամկորեն» լեզվի շնորհիվ այն ուշադրություն է րենել իր վրա և լայն ձանաշում դանել: Սկսած ԺՊ դարից մինչև ԺՊ գար «Ժղլանքը» արտապրվել է բաղմաթիվ ձեռագրերում: Այս բնդարձակ ժամանակաշրջանի գիտության ծարավի ընթերցողների համար այն հանդիսացել է իրենց հարցասիրությունը գոհացնող հազվագյուտ զրքերից մեկը:

Շատ բնական է, որ այսպիսի մի երկասիրություն չեր կարող վրիտել բանասիրության տեսագաշտից, սակայն պետք է նշել, որ այն պատշաճ ուշադրության և գնահատանքի շի արժանացել ցայսօր:

«Ժղլանքի» մասին առավելապես խոսվել է հայերեն ձեռագրացուցակներում: Նրա առանձին նյութերի քանակն ու ծավալը ճշտելու ուղղությամբ կատարված է որոշ աշխատանք, սակայն, ձեռագրերում նրա ունեցած ոչ միօրինակ վիճակը շատ շփոթությունների առիթ է տվել:

Ձեռագրացուցակների հեղինակներից բացի, ամբողջ «Ժղլանքի» կամ նրա այս կամ այն նյութի մասին խոսել են շատ հայագետներ: Առաջին անգամ Մ. Զամշյանն է բանասիրորեն բննության առել «Ժղլանքի» մասը կազմող Հեթում Ա.-ին ուղղված հայտնի Թուղթը, որը Պատինվիրակ Դիմանչի՛ հայ եկեղեցու դիմ զրած մեղադրանքների սրամիտ պատասխանն է: Միիթարյան պատմարանն այդ Թղթին անդրադառնում է շառնշելով այն «Ժղլանքի» հետ և զանում, որ այն

13 Հ. Առելյան, Կիլիկիայի վանքերը, Վիեննա, 1957, էջ 96:

14 Ի. Հարությունյան, Հայոց գիրք, Թիֆլիս, 1892, էջ 267:

Վարդան Արենելցու գրչին պատկանել շի կարող, քանի որ տողորված է «թանձրամիտ տգիտութեամբ», այլ Սելեսնցի ոմն Վարդանի կամ Վարհամի գործն է<sup>15</sup>: Մ. Զամշյանի այս տեսակետը պաշտպանել են Մխիթարյաններից շատերը<sup>16</sup>: Ամբողջ «Ժղվանքի» մասին առաջին անգամ որոշակի խոսք ասել է Դ. Ալիշանը Վարդան Արենելցու «Հաւաքումն պատմութեան» 1862 թ. հրատարակության առաջարանում, ի միջի այլոց նշելով, որ այն գրված է «պարզ ու ուամկական ոճով» և ունի 66 նյութ<sup>17</sup>: Ավելի ուշ նա դարձյալ անդրադարձել է նրան իր «Մխուան» և «Հայապատում» ստվար աշխատությունների մեջ<sup>18</sup>:

Ֆրանսիացի անվանի Հայագետ Վիկտոր Լանգլուան հայ գրերի գյուտով և նրա հետ առնչվող խնդիրներով զբաղվելիս ձեռքի տակ ունեցել է նաև «Ժրդանքը», որը հիմք ընդունելով՝ ենթադրել է, թե իբր Հայ գրերը ասորական ժագում ունեն<sup>19</sup>:

Ի. Հարությունյանցը ևս իր «Հայոց գիրը» աշխատության մեջ «Ժղվանքի» վերաբերյալ դրել է, որ այն ընդարձակ տեղեկություններ է պարունակում հայ գրերի մասին և կոչվել է ոչ թե «Ռոկեփորիկ», այլ «Վարդանգիրը»<sup>20</sup>:

«Ժղվանքին» անդրադարձել է նաև Ն. Մառը 1892 թ.: Նա բանասերների ուշադրությունն է հրավիրել նրա պարունակած մի վկայության վրա, ըստ որի, յորք թե, Արգար թագավորի և Թագեռս առաքյալի ջանքերով իրագործվել է ու Գրքի ասորերեն մի թարգմանություն: Նա առանձնապես ուշադրություն է դարձրել այդ վկայության մեջ եղած «Էռութիւն» բառի վրա, որը եղել է ու Գրքից այդ հին թարգմանության մեջ, որն այժմ պակասում է ներկա մեղ հասած բնագրերից<sup>21</sup>:

Մ. Օրմանյանը նույնպես քննության է առել «Ժղվանքի» նյութերից Դիմանչ նվիրակի գեմ գրված վերոգրյալ թուղթը և ընդգծել նրա ազգային-հասարակական նշանակությունը<sup>22</sup>:

Իր «Յովհ. Վանական և իր դպրոցը» մենագրության մեջ «Ժղվանքի» առանձին նյութերի մասին համեմատաբար հանգամանորեն խոսել և բանասիրական կարևոր ձշտումներ է արել Հ. Ռոկյանը<sup>23</sup>:

Գ. Հովսեփյանը Մ. Այրիվանեցու հայտնի «Գրքերի ցուցակները» ուսումնասիրելիս կանգ է առել նաև «Ժղվանքի» «հսկ բանի» գիրք են Աստուածաշունչ» հատվածի վրա և նշել վերջինիս ավելի վաղ գրված լինելը<sup>24</sup>:

Հիշյալ բոլոր հայագետներից ավելի «Ժղվանքով» զբաղվել է Լ. Խաչիկյանը: Նա 1943 թ. «Տեղեկագրում» լույս ընծայած «Վարդան Արենելցու վասն

15 Մ. Զամշյան, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1786, հ. 3, էջ 231:

16 Վ. Արենելցի, Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ Ժ. Գ. Զարք Հանալան, Պատմութիւն Հայ Հին դպրութեան, Վենետիկ, 1932, էջ 751: Գ. Մարգիս Ալան, «Բագմալէկը», 1949, էջ 120: ՏԵ՛ս նաև Ս. Կողյան, Հայոց եկեղեցին, Թեյրութ, 1961, էջ 456:

17 Վարդան Արենելցի, Հաւաքումն պատմութեան, էջ 9.:

18 Դ. Ալիշյան, Միսուան, Վենետիկ, 1885, էջ 224, Հայապատում, էջ 469, 470:

19 V. Langlois, Collection des historiens anciens et modernes de l'Arménie, Paris, 1869, հ. 11, էջ 7:

20 Ի. Հարությունյան, Հայոց գիրը, Թիֆլիս, 1892, էջ 267:

21 Ն. Մառ, Ամասային ուղևորութիւններ դեպ ի Հայոց, Ակատողութիւններ և բաղուածքներ հայկական ձեռագրերից, Վիեննա, 1892, էջ 16:

22 Մ. Օրմանյան, Ազգապատում, Թեյրութ, 1960, էջ 1642:

23 Հ. Ռոկյան, Յովհ. Վանական և իր դպրոցը, Վեննա, 1922, էջ 77:

24 Գ. Հովսեփյան, Խաղականք և Գորշեանք, Երևանիմ, 1944, էջ 112:

բանին մասանց աշխատությունը» հոդվածի մեջ խոսելով Արևելցու Կիլիկիայում ունեցած գրական արդյունավետ գործունեության մասին, ի միջի այլոց գրել է, որ «Ժղանքում» պարզ լեզվով շարադրված են «ժամանակի ամենառաջավոր հայացքները տիեզերագիտության, երկրի կառուցվածքի, գրի և գրերի գյուտի, երաժշտության և այլ հետաքրքիր խնդիրների մասին»<sup>25:</sup>

Գ. Զահուկյանը ևս շատ բարձր է զնահատել «Ժղանքի» «Վասն բանին մասանց» քերականագիտական նյութը՝ ընդգծելով հայերենի շարահյուսության բնագավառում նրա քերած նորությունները և պարզ ու մատչելի լեզուն<sup>26:</sup>

Իր «Միջին հայերեն» աշխատության մեջ Ս. Ղաղարյանը, բանից անդրադառնալով Արևելցու տարբեր աշխատություններին, նշել է նաև «Ժղանքի» ու նրա վերոհիշյալ քերականական նյութի լեզվական առանձնատկություններն ու դիտական արժանիքները<sup>27:</sup>

«Ժղանքը» դեռևս հրատարակված չէ: Տարբեր ժամանակներում նրանից միայն առանձին նյութեր և հատվածներ են լույս տեսել:

Առաջին արտատպությունը «Ժղանքից» (հայ գրերի գյուտին վերաբերող հատվածը) 1867 թ. կատարել է ֆրանսիացի հայագետ Պրյուզոմը՝ ֆրանսերեն թարգմանությամբ<sup>28:</sup>

Նույնը համապատասխան մեկնարանություններով լույս է ընծայել նաև Վ. Լանգլուան<sup>29:</sup>

Այնուհետև միհնույնը լույս է տեսել «Բազմավելում»՝ «Թատարիկ մի ի զրոց մեծի վարժապետին վարդանայ վասն գիւտի տառից մերոց ի ծեռն Ս. Մեսրոպայ» հրատարակիչների պայմանական վերնագրով<sup>30:</sup>

Այս նույն հատվածը առկա է նաև Ի. Հարությունյանի «Հայոց գիրը» աշխատության մեջ<sup>31:</sup>

1869 թ. «Արարատ» ամսագրում «Ժղանքից» լույս է տեսել մի այլ հատված, որը կազմված է հարց ու պատասխանի ձեռվ և վերջում ունի Հովհ. Գառնիեցու կողմից հեղինակին պատմված ուն պարսիկի քրիստոնյա մկրտվելու մասին հրաշապատումը<sup>32:</sup>

Մեր ձեռքի տակ եղած մի քանի հավաստի տվյալներ վկայում են: Որ «Ժղանքի» անմիջական մասն են կազմում որոշ նյութեր, որոնք մինչև այժմ դիտվել և հրատարակվել են իրեն նրանից անջատ առանձին միավորներ: Այդ մասին հանդամանորեն կխոսենք ստորև: Այժմ միայն թվենք ուղի նյութերի հրատարակությունները: Մեկը պասի նվիրակ Դիմանչի մեղադրանքների կապակ-

25 Լ. Խաչիկյան, Աշված հոդվածը «Տեղեկագիր», ՍՍՀՄ Ակադեմիայի հայկ. ֆիլիալ՝ 1943, № 2, էջ 82:

26 Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 245, 253, 255: Տե՛ս նաև Լ. Խաչիկյան, Հայ շարահյուսագիտական մտքի վաղ շրջանի պատմությունից, «Բանիքը Մատենադարանի», 1962, № 6, էջ 114:

27 Ա. Ղաղարյան, Միջին հայերեն, Առաջին գիրը, Երևան, 1960, էջ 86, 105, 121—124:

28 Prudhomme, Solutions des passages de lecture sainte, par le vartabed Vartan. Trad. de l'arménien vulgaire sur le texte original. Paris, 1867, էջ 199:

29 V. Langlois, Collection des historiens anciens et modernes de l'Arménie, Paris, 1869, 5, II, էջ 7:

30 «Բազմավելում», Վենետիկ, 1887, համ. 106, էջ 197:

31 Ի. Հարությունյան, Հայոց գիրը, էջ 267:

32 «Արարատ», 1869, էջ 52:

ցությամբ նրա շարադրած գավարանական նշանավոր թուղթն է, որն առաջին անգամ հրատարակվել է «Արարատում» և ապա՝ «Գիրք թղթոցի» մեջ<sup>33</sup>, մյուսը վանական վարդապետի անունով նույն «Գիրք թղթոցում» լույս տեսած հատվածն է<sup>34</sup>: Երրորդը «Վասն բանին մասանց» քերականական նյութն է, որը հրատարակության է Հանձնել է. Խաչիկյանը 1943 թ. համապատասխան առաջարանով և համառոտ ուսումնասիրությամբ<sup>35</sup>:

«Ժղվանքին» վերաբերող կարեռագույն հարցերից մեկը նրա կառուցվածքի, ծավալի, ընդգրկած նյութերի և ամբողջականության հարցն է: Մեր, մանավանդ ուշ շրջանի, ձեռագրերում նրա ընդհանուր պատկերը շատ է աղավաղված: Զանազան զրիշներ, օգտվելով նրա կառուցվածքային առանձնահատկություններից, նրանից քաղել են միայն իրենց հետաքրքրող անհրաժեշտ նյութերը, որոնք հետագայում առանձին ընդօրինակվելով, գիտվել են իրեն ինքնուրույն միավորներ: Այսպիսով զրանք երբեմն զուրս են եկել ոչ միայն «Ժղվանքի» կազմից, այլ նաև հեղինակի «իրավասությունից», մնացել են կամ իրեն անհայտ հեղինակի գործ, կամ էլ վերագրվել մեկ ուրիշի:

Ստորև մենք համառոտակի կանգ կառնենք այն մի քանի ձեռագրերի վրա, որոնք եղածներից հնագույններն են և «Ժղվանքի» ընդգրկում են ամբողջությամբ:

Ա.— Փարիզի Ազգային գրադարան, Հայկական ֆոնդ, № 12, 1274 թ., ստացող՝ Կեռան թագուհի<sup>36</sup>:

Բ.— Հալեպի Ս. Քառասուն մանկունք եկեղեցի, № 155, 1292 թ., Կիլիկիայի Փերձեր անապատ: Գրիշ՝ Խաչատուր<sup>37</sup>:

Գ.— Վենետիկի Մխիթարյանց մատենադարան, № 264, 1366 թ., «Հավանորեն Աղթամարա Ս. Խաչ վանք»: Գրիշ՝ Աղոմ<sup>38</sup>:

Դ.— Վենետիկի Մխիթարյանց մատենադարան, № 266, «Հավանորեն Ժդղարուն վերջին կեսին և կամ Ժդղարուն սկիզբներն»: Գրիշ՝ Վասիլ սարկավագ, անանուն<sup>39</sup>:

Ե.— Մաշտոցյան մատենադարան, № 750, Ժդղարուն Գրիշ՝ Մարգիս:

Զ.— Մաշտոցյան մատենադարան, № 2544, Ժդղարուն Գրիշ՝ Մարգիս:

Է.— Մաշտոցյան մատենադարան, № 341, 1405 թ.: Գրիշ՝ Միմեռն վարդապետ:

Այս յոթ ձեռագրերում նկատելի է Երկու օրինաշափություն՝ նյութերի հավասարաշափի (քիշ բացառությամբ) ու ծավալուն ընդգրկում և նյութերի համանման (մի քանի մասնակի խախտումներով) դասավորություն: Որպեսզի ավելի ստույգ և հստակ պատկերացում տանք «Ժղվանքի» այդ ձեռագրերի կառուցվածքի ու ծավալի մասին, ստորև կրերենք համեմատական մի տախտակ,

33 «Արարատ», 1892, էջ 964: «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 503:

34 Անդ, էջ 533:

35 «Տեղեկադիր», 1943, № 2, էջ 81:

36 F. Maclear, Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la bibliothèque nationale, Paris, 1908, էջ 21:

37 Ա. Ալուրժելյան, Ցուցակ Հայերէն ձեռագրաց Ս. Քառասուն մանկունք եկեղեցու Հալեպի, Երևան, 1935, էջ 343:

38 F. Մարգիս սույն, Մայր ցուցակ Հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց և Հենեաբեկ, Վենետիկ, 1924, թ. էջ 1063:

39 Անդ, էջ 860:

ուր նշված են ձեռագրերում առկա նյութերը իրենց հաջորդականությամբ և էջերով։ Դժբախտաբար սույն ձեռագրերից շորսի էջերը շկարողացանք նշել որովհետև ձեռագրերը շեն եղել մեր ձեռքի տակ։ Համեմատական տախտակը կազմելիս հիմք ենք ընդունել Մաշտոցյան մատենադարանի № 750 ձեռագիրը։ Այստեղ «Ժղլանքն» ունի շուրջ 70 նյութ կամ գլուխ<sup>3</sup>, որոնցից ոչ բոլորն են խորագրված, բայց համարակալված են։ Նման համարակալում ունեն նաև վերոհիշյալ Գ, և և այլ ձեռագրեր<sup>40</sup>։ Սակայն ձեռագրացուցակների մեջ, մի շաբար զյուխներ երրհմն խոտցված-միացված են։ Մյենք թեկուղ մի օրինակ, Բ. Սարգսյանի Զեռագրաց ցուցակում (Բ. Հատոր, էջ 839) ներկայագրված № 264 (Գ) ձեռագրի Գ, բաժանման մեջ ցուցակի հեղինակը ներկայացրել է «Ժղլանքի» այն նյութերը, որոնք մեր № 750 ձեռագրի մեջ արտացոլված են Դ—Ի. Համարներով, այսինքն այս 18 նյութերը հանդես են եկել իբրև 1 նյութ։ Այսպիսով ձեռագրացուցակները մեզ հնարավորություն շեն տալիս համեմատական տախտակում ցույց տալ «Ժղլանքի» շուրջ յոթանասուն նյութերի տեղն ու հաջորդականությունը բոլոր ձեռագրերում։ Ստիպված ենք գոհանալ՝ նշելով № 750 ձեռագրի միայն այն նյութերը, որոնց համապատասխանները ընդհանրապես արտացոլված են ձեռագրացուցակներում և որոնք ներկայացնում են ամբողջ «Ժղլանքը»։

Ինչպես տեսնում ենք, համեմատված այս 7 ձեռագրերը «Ժղլանքի» առընչությամբ հիմնովին նման են իրար, մանավանդ նրա նյութերի միևնույն բանակի և ծավալի ընդգրկմամբ։ Այդ նյութերի հաջորդականությունը ևս համեմատաբար պարզ է, ինչպես ցույց են տալիս մեր ձեռքի տակ եղած երեք ձեռագրերի նշված էջահամարները։ Հարկ է նաև նկատի ունենալ, որ սույն 7 ձեռագրերից առաջինը ընդօրինակվել է «Ժղլանքի» հեղինակի մահից ընդամենը 3 տարի հետո, ուստի անտարակույս նրա կենդանության օրոք ընդօրնիակված մի ձեռագրից։ Զմոռանանը նաև նշել, որ նրա ստացողը Կեռան թագուհին է, այսինքն՝ ղեկավարը այն արքունի տան, որտեղ, ամենայն հավանականությամբ, պահպում էր Հեթում Ա.-ին ուղարկված «Ժղլանքի» սկզբնադիրը՝ համաձայն Վարդան Արևելցու իսկ պատվերին։ «Թո՛ղ թագուհին պահէ, և ի պիտոյ ժամն առնոյք ի նմանէ...»<sup>41</sup>։ Ուստի կարելի է հնիագրել, որ 1274 թ. արտագրված այդ ձեռագիրը ընդօրինակությունն է «Ժղլանքի» բուն սկզբնադրի և կամ նրա անմիջական հաջորդներից մեկի։ Այսպես թե այնպես որոշ է, որ Արեգելցու հեղինակած «Ժղլանքը» ամենամերձավոր ճշգրտությամբ է ի հայտ գտնիս վերոհիշյալ 7 ձեռագրերում։

Զեռագրերի սւառմնասիրությունը ցույց է տալիս, որ «Ժղլանքն» իրավես բազմաթիվ և բազմազան նյութերից կազմված ընդարձակ մի ժողովածու է։ Այս մասին հիշատակություն ունի ինքը՝ Արևելցին վերը բերված իր հիշատակարանում, որտեղ հայտնում է, թե զրել է ոչ միայն Հեթում Ա.-ի ինդրած նյութերի մասին, այլև սիրով ավելացրել է իր շարադրանքը այլ Հարցերի վերաբերյալ։ «...Եւ յիշեա՛ (Հեթում Ա.-Փ. Ա.) զոր ի ձեռն Թորոսի հրամայեցիք

\* Հարկ է նշել, որ համարակալված այս 70 նյութերը պայմանականորեն են բաժանված իբրև առանձին միավորներ և ոչ ամեն մի առանձին համար կրող նյութ մրտաներից անկախ բովանդակության ունի։ Նյութ ասկելով՝ մենք նկատի ունենք համարակալված այս կամ այն միավորը։

<sup>40</sup> Տե՛ս Մաշտոցյան մատենադարանի № 341 և Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի № 264 ձեռագրերը։

<sup>41</sup> Չեռ. № 341, էջ 104ր։

վասն եղարերից կանանցն զրել ձեզ և ի խորհուրդ պատարագին. և ապա երեսաւը յԱնդուզն հրամաեցիր, որ զրեաք ձեզ ժղովանք ի մեկնութենէն քերականին: Եւ ես այլ յաւելի սիրով զրել ձեզ ձեռամբ լուծմունս յԱւետարանէն և յԱրարածոցն»<sup>42</sup>: Մի այլ տեղ զարձյալ զրել է. «...այս բաւական է, որ չնեղանէք, վասն շարշարանացն և իդարերիցն լիով է, յայլ բաներ գնասցուք»<sup>43</sup>:

«Փղանքի» խորագրում, իբրև Հեղինակ, նշված է Վարդան Արենլցին: Մի այլ աշխատության դեպքում այսրանն էլ կրավեր հավաստելու Հեղինակի ինքնությունը: Լինելով մի շարք ինքնուրույն նյութերի ժողովածու, անցնելով եր-

1	2	էջ	Մաս.	Փղանք	Տարի	Ժ. 266	Վիճակ	Մաս.	Մաս.
			750	75	155	266	264	254	341
1	Հրամանն պատկառեցուցի:	1ա	ունի	ունի	ունի	ունի	3ա	1ա	
2	Նշանը կազմի	5ր	2	3	2	2	8ա	5ա	
3	Մատթէոս թարգմանի երդ	7ր	2	3	2	2	10ա	7ա	
4	Լինի և այլ պատճառ	21ր	2	չունի	2	2	26ա	21ա	
5	Յովհաննէս յետ ՇԲ:	36ա	2	3	2	2	44ր	32ր	
6	Աւագակն, որ ընդ	38ր	ունի	չունի	ունի	ունի	47ա	34ր	
7	Կենարուխ սուրբ	46ա	2	ունի	2	2	61ա	41ա	
8	Զինչ է ճրագալուցին	50ա	2	3	2	2	65ա	44ր	
9	Ո՞ր է կերպարան ծառային	51ա	2	3	2	2	66ա	45ր	
10	Բնաթիւն է սկիզբն	51ր	2	3	2	2	68ա	108ա	
11	Թէ որպէս իմանի Աստուած	54ա	2	3	2	2	70ր	46ա	
12	Զայլ աւուրսն արարշութեան	76ա	2	3	2	2	104ա	64ա	
13	Եւ զետ ելանէր	79ր	2	3	2	2	109ր	66ր	
14	Շատ է յարդ զրոյս	98ր	2	3	2	2	138ա	81ա	
15	Սովաէսի որդիքն ի՞նչ:	103ա	2	3	2	2	145ա	84ր	
16	Զինչ է, որ առէ Դաւիթ	109ա	2	3	2	2	153ր	89ր	
17	Միշտ կամիւ զիտակ զու	122ա	2	3	2	2	174ր	100ա	
18	Նշանագիրք	126ա	2	չունի	2	2	181ր	105ր	
19	Թուղթ Պիդառոսի	129ր	չունի	ունի	2	2	185ա	չունի	
20	Հարցմունք զշխոյին	138ր	ունի	2	2	2	196ր	138ա	
21	Թուղթ առ հեթում	չունի	2	3	2	չունի	213ա	չունի	
22	Այլ ոճ զիհնելոյ ընդ	151ա	2	3	2	2		122ա	
23	Վասն օրհնութեան եկեղեցւոյ	161ա	2	3	2	2		131ա	
24	Վասն անխմար հացին	162ր	2	3	2	2		132ա	
25	Յաղաց ժողովոց	163ր	2	3	2	2		133ա	
26	Գործաւորք որ ի մարդն	167ր	2	3	2	2	211ա	137ր	
27	Նարին Վարդանայ՝ Աղօթք	169ա	2	չունի	2	չունի	223ա	չունի	
28	Աղօթք Աստուածածնին	175ր	2	ունի	2	2	չունի		
29	Աղօթք առ Ս. Խաչն	176ա	2	3	2	2	չունի		
30	Տաղական բանին ցոյցք	168ր	2	3	2	2	212ա		
31	Վասն բանին մասանց	142ա	2	3	2	2	201ա		

կար ճանապարհ և ժամանակի ընթացքում ենթարկվելով նույնիսկ ծավալային որոշ փոփոխության, «Փղանքը», սակայն, պահանջում է անհրաժեշտ ձշումներ և լրացուցիչ փաստեր: Բարերախտաբար նրանք բիշ չեն և մեծ մասը նրանցից առկա է բուն իսկ «Փղանքի» մեջ:

Այսպես օրինակ. նրա նյութերից մի բանիսի վերնագրերում, բոլոր ձեռագրերում անխմիր, կրկնված է Վարդան Արենլցու անունը իբրև Հեղինակ: Այդ

42 Զեռ. N 341, էջ 103ա:

43 Զեռ. N 750, էջ 38ր:

նյութերի թիվը հասնում է 8-ի: Դրանք են մեր № 750 ձեռագրում եղած համարակալման թվերով Ա, Բ, Ժ, Ժէ, Ի, ՇԳ, Կէ նյութերը: Խակ իջ և Ա. Համարները կրող նյութերի վերջում դարձյալ կա Արևելցու անունը և խնդրվում է հիշել նրան: Այս հիշատակությունները գալիս են կրկին անդամ ապացուցելու, որ հիշյալ նյութերի հեղինակը ինքը՝ Վարդան Արևելցին է:

«Ժղանքի» գրեթե յուրաքանչյուր նյութի խորագրում կամ բուն բնագրի մեջ կա մի որեւէ ուղղակի խոսք կամ ակնարկ ուղղված Հեթում Ա. թագավորին: Այս երեսութքը «Ժղանքը» դարձնում է մի ամբողջական, ներքնազես միաձույլ և, մանավանդ, մտերիմ զրույց: Ուղղակի այդ խոսքերի մեջ, որոնց շնորհիվ հեղինակը անընդհատ կապի մեջ է պատվիրատու արքայի հետ, երբեմն կո որոշակի թելագրանք, խրատ և այս կամ այն բարի խորհուրդը: Նրանց կարելի է մեկ կամ նույնիսկ մի քանի անգամ հանդիպել Ա.—Ժէ, իԵ, ԽԱ—ԻԴ, ԽԵ—ԽԸ, ՇԲ, ՇԳ, ՇԷ—ՇԹ և ԿԶ նյութերի մեջ<sup>44</sup>: Ուստի սրանք ես, անտարակույս, պատկանում են Արևելցու գրչին:

Ս, ՍԱ. Նյութերն հիմնականում ունեն միևնույն բովանդակությունը, շարունակում են մեկը մյուսին և սերտորեն կատված են ՇԲ նյութին, որի հեղինակը ինչպես արդեն ցույց ենք տվել, Վարդան Արևելցին է:

ԿԲ և ԿԹ նյութերը աղոթքներ են, հաջորդում են Կէ աղոթքին և ունեն լեզվա-ոճական նույն հատկանիշները, ինչ որ այն ունի: Վերջինիս խորագրում, ինչպես արդեն նշել ենք, Վարդան Արևելցին հիշատակված է որպես հեղինակ: Կարծում ենք, որ նրա հեղինակային իրավունքը տարածվում է նաև հիշյալ երկու աղոթքների վրա:

Չմոռանանք ասել, որ ոչ բոլոր համարակալված նյութերն են որոյն միավոր հանդիսանում: Երբեմն մեկ ընդհանուր միավոր ունի մեկից ավելի համար: Ըստ այսմ մենք կարծում ենք, որ Շ, Կ—ԿԵ նյութերը նույնպես պատկանում են Վարդան Արևելցու գրչին, որովհետեւ, ըստ էության նրանք ենթամտածերն են այն նյութերի (ՇԷ—ՇԹ), որոնց հեղինակային պատկանելիության մասին արդեն խոսք եղել է վերը:

ՄԴ նյութը, որն հանդիսանում է «նշանագիրը իմաստնոցի» հայտնի ցանկը, հաղիկ թե այլուստ պատահաբար մուտք գործած լինի «Ժղանքի» մեջ:

Հնագույն ձեռագրերում այն ընդգրկված է որպես «Ժղանքի» մի մաս: Եթե Վարդան Արևելցին հարկ է համարել Հեթում Ա.-ի համար գրել քերականության, լեզվի կամ գրերի մասին, ապա անհավանական չէ, որ նա նշանագրերի մասին ես գրեր: Մեզ թվում է ձիշտ է Ա. Արքահամյանը, երբ գտնում է, որ նշանագրերի սույն ցանկի հեղինակը Վարդան Արևելցին է<sup>45</sup>:

«Ժղանքի» նյութերից երկուսի վերնագրերում ի միջի այլոց գրված են. «Վանական վրդ-ի ասացեալ», «ԱԱ բան Վանականին տառցեալ»: Շատերը աներկրայորեն կարծել են, որ այդ երկու նյութն էլ Հովհ. Վանական Տափուշեցունն են, առանց հաշվի առնելու, որ «վանական» բառի առկայությունը բարգարա հիմք չի կարող հանդիսանալ: Զէ՞ որ «վանական» մակդիրով այլ վարդապետներ ես հիշատակվում են մեր մատենագրության մեջ: Ասենք նաև, որ խնդրո առարկա երկու նյութն էլ, ինչքան մեզ հայտնի է, որիէ ձեռագրում շեն

44 Զեռ. № 750, էջ 38բ—54ա, 109ա, 121ա, 143բ:

45 Մանրամասն տե՛ս Ա. Արքահամյանի առաջնային պատմություն, Երևան, 1959, էջ 151—156:

Հանդիպել «Ժղվանքից» առաջ, ոչ մի անգամ «Յովհաննէս» անունը ղետեղած չի եղել նրանց վերնագրերում, մինչդեռ «Վարդան» անունը արդեն նկատվել է մի շաբթ ձեռագրերում<sup>46</sup>, որոնցից Մաշտոցյան մատենադարանի № 3236 ձեռագիրը ժԴ դարի ընդօրինակություն է: Թերեւ Հետագա արտագրությունների ժամանակ «Վարդանը» դուրս է ընկել, և «վանական» մակղիրը ընդունվել է իրեւ Հատուկ անուն և կարծվել, որ Հիշյալ նյութերի հեղինակը Հովհաննէս Տավուշցի վանական վարդապետն է<sup>47</sup>:

Տարկ ենք Համարում այստեղ մեջ թերեւ նաև Վենետիկի Մխիթարյան մատենադարանի 1366 թ. ընդօրինակված ձեռագրի հիշատակարանը, որտեղ ասված է, որ «Ժղվանքի» գոնե 66 նյութերի հեղինակը Վարդան Արևելցին է: «Փառք... որ ետ կարողութիւն տկարութեանս իմոյ Համանել ի զրաւ տառիս, որ է Վարդան վարդապետի արարեալ բանս ԿԶ»<sup>48</sup>:

Այսպիսով ընդամենը երկու նյութ է մնում, որոնք թեև ընդգրկվել են «Ժղվանքի» կազմի մեջ, բայց, թերեւ, Վարդան Արևելցին զրշին չեն պատկանում: Դրանք են «Թուղթ Պիղատոսի առ Տիրերիոս» և «Հարցմունք Դշխոյի և պատասխանիք Սողոմոնի»: Նրանց մուտքը «Ժղվանքի» կազմի մեջ Համենայն դեպքս, դժվար թե պատահաբար տեղի ունենար. Թերեւ զրանք, «Ժղվանքի» հեղինակի կողմից ուսանելի են Համարվել Երիտասարդ թագավորի Համար, ուստի և զետեղվել են «Ժղվանքի» մեջ: Ի դեպ, ինչքան մեզ Հայտնի է, սույն երկու նյութը մեր ձեռագրերում առաջին անգամ Հանդիպում են «Ժղվանքի» կազմում: Արդյոք Վարդան Արևելցին չէ՝ նրանց Հայերեն թարգմանիչը: Թերեւ:

«Ժղվանքը» զրելիս Վարդան Արևելցին օգտագործել է զրավոր և բանավոր քաղմաթիվ աղբյուրներ: Այդ Հայտնի է զառնում առաջին Հերթին իր իսկ վկայություններից: Բայց, ինչպես ընդունված է եղել իր ժամանակ, միշտ չէ, որ նա հիշատակել է օգտագործած աղբյուրները: Մեր որոնումներից պարզվել է, որ կան նաև այնպիսիները, որոնք նա ձեռքի տակ ունեցել է, սակայն անունները չի նշել: Այնուամենայնիվ, «Ժղվանքի» տարրեր հատվածներում կարելի է հաճախ Հանդիպել օգտագործված աղբյուրները մատնանշող վկայությունների: Օրինակ, «Յոհան Ռուկիարան և Կիւրեղ Աղէքսանդրու չորք են յասել», «Բայց Եփրեմ Ասորի նոր բան է ասցել», «Բայց Ստեփաննոս Սիւնեցի սրանշելի իմաստասէրն, քննեալ ստուգիւ զժամանակն յի՞ն ամաց ասէ», «...այլ զրիմ քեզ զեղիշէին, զոր սիրեմ մանաւանդ», «Մերն Անանիայ ասէ», «Ի Կղէմ գիրքն յասել է», «Եւ Կիւրեղ ասէ», «Եւ սուրբն Աթանաս վկայէ», և այլն<sup>49</sup>: Այս կարգի հիշատակություններից իմացվում է, որ նա հիմնականում օգտագործել է Հովհաններեանի, Եփրեմ Ասորու, Եվսեբիոս Կեսարացու, Կյուրեղ Աղէքսանդրացու, Ակակիոսի, Գր. Աստվածարանի, Աթանասի, Եղիշեի, Անանիա Եփրակացու,

46 Կանաչան, Ցուցակ Հայերէն ձեռագրաց Թիֆլիզի Ներսիսյան վարժարանի, Թիֆլիզ, 1893, էջ 32: Անառիան, Ցուցակ Հայերէն ձեռագրաց Թաւրիզի, Վիեննա, 1910, էջ 48: Դիլուկան Առան, Ցուցակ ձեռագրաց Անկիրիոյ Կարմիր վանուց և շրջակայից, Անթիւան, 1957, էջ 238: Մաշտոցյան մատենադարան, ձեռ. № 8132, էջ 29ա, 31ր, 3236, էջ 172ր, 176ա:

47 Այս մասին տե՛ս Հ. Ռոկան, Հովհաննէս Վանական և յուր զպրոցը, էջ 32: Խոլդերտան. Նույտ Վանական Վարդապետին ասացեալ Բան Հաւատալի ազգին մերում. «Հանդէս ամսօրեալ», 1925, 9—10, էջ 463:

48 Բ. Արքիսայան, Մայր ցուցակ Հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեան, Քէնենտիկ, Բ, էջ 264:

49 Մաշտոցյան մատենադարան, ձեռ. № 750, էջ 1ա, 3ր, 10ր, 63ա, 70ա, 118ր, 150ա, 155ր:

Ստեփանոս Սյունեցու, Հովհան Վանականի և այլոց աշխատությունները։ Հայունի է դառնում նաև, որ նա իր տրամադրության տակ ունեցել է ասորական, երրայական և հունական այլ ազրյուրներ։ Երբ նա զրում է, թե «սուտ են երրայացիք և տսորիք», «արտաքին իմաստասէրքն այսպէս տացեն», «զոր ֆրանգն Բիրդաղուր ասեն», «յոյնն և ասորին հողմ ասեն, զի առ նոստ մի է հողմոյ և հոգույ անուն», «Բայց զրտա յասորոց»<sup>50</sup>, նկատի ունի հիշյալ լիզուներով զրված իր օգտագործած ազրյուրները։

«Ժղլանքի» համեմատությունը վերը հիշատակված հեղինակների երկերի հետ մեզ բերել է այն եղբակացության, որ Վարդան Սրենեցին օտար հեղինակներից քիչ անգամ է բառացի օգտվել, հիմնականում շարադրել է նրանց տեսակետները։ Այսպես օրինակ, նա մի անգամ վկայակոչել է Եփրեմ Ասորուն, նրա տարրեր կարծիքները ամփոփել, բայց ընդամենը մեկ անգամ նրանից բառացի մեջրերում է արել. «Բայց Եփրեմ ասէ, թէ նշան եղ աստուած շապանանել զԿային», որը Եփրեմ Ասորու մոտ հետեւյալ կերպ է. «Եւ եղ (աստուած — Փ. Ա.) ի Կայէն նշան, զի մի ոք իշխեսցէ սպանանել զնա»<sup>51</sup>. Այլ առթիվ միայն ներկայացրել է նրա կարծիքը<sup>52</sup>: Այլուր խոսելով Քրիստոսի մեկ թե երկու ընության դավանաբանական վեճի մասին, այլ հեղինակների թվում հիշատակել է նաև Աթանաս Աղեքսանդրացուն։ Այս դեպքում ևս նա վերապատմել է նրա դավանաբանական մեկ տեսությունը<sup>53</sup>. Նա մոտավորապես այսպես է վերաբերվել նաև մյուս, հատկապես օտար եկեղեցական հայրերի աշխատություններին։

Սակայն քիչ այլ է պարագան Եղիշեի և Հովհան Վանականի աշխատություններից օգտվելու խնդրում։ Իր իսկ վկայություններից հայտնի է դառնում, որ նա նրանց գիմել է հաճախ։ Եղիշեի անունը մասնավորաբար շատ է հիշատակվել արարշագործության վերաբերյալ հատվածներում։ Իր «Մեկնութիւն Հնգամատենին» աշխատության մեջ, որտեղ նույնպես հանգամանորեն մեկնարանել է Ծննդոց գիրքը, դարձյալ վկայակոչել է Եղիշեին և բաղվածքներ արել նրա աշխատություններից։ Սրենեցու այս երկու գործերը տվյալ խնդրում առընչըլում են մեկը մյուսին։ Լ. Խաչիկյանը իր մի անտիպ աշխատանքում ցույց է տվել Սրենեցու «Մեկնութիւն Հնգամատենին» երկասիրության և Եղիշեի մեզ հասած «Մեկնութիւն արարածոց»-ի առնշտեթյունները և պարզել, որ առաջնի մեջ երկրորդից շատ հետքեր են պահպանվել<sup>54</sup>։ Այսպիսով «Ժղլանքը» ևս ուղղակիորեն կապվում է Եղիշեի հիշյալ աշխատության հետ։

Ինչ վերաբերում է «Ժղլանքի» և Հովհան Վանականի երկերի աղեքսաներին, պետք է ասել, որ նրանք համեմատաբար ավելի նկատելի են։ «Ժղլանքի» և Հովհան Վանականի «Հարցմունք և պատասխանիք» աշխատության համեմատությունը ցույց է տալիս, որ նույնիսկ բառացի հատվածներ են մուտք գործել երկրորդից առաջնի մեջ։ Այսպես օրինակ,

<sup>50</sup> Զեռ. № 750, էջ 62ա, 147ա, 13բ, 60ա, 57ա.

<sup>51</sup> Անդ, էջ 94աւ. Հմմատ. Եփրեմ Ասորի, Մատենագրութիւնը, Վենետիկ, 1836, հ. Ա., էջ 35, նաև՝ «Գիրք Սննդոց», զլ. Ե. Հմբ. 15:

<sup>52</sup> Զեռ. № 750, էջ 3բ, Հմմատ. Եփրեմ Ասորի, նշվ. աշխատ., հ. Բ, էջ 203.

<sup>53</sup> Զեռ. 750, էջ 155ա, 155բ. Հմմատ. Աթանաս, Մատենագրութիւնը, Վենետիկ, 1899, էջ 526, 481:

<sup>54</sup> Լ. Խաչիկյան, Եղիշեի Արարածոց մեկնությունը (անտիպ)։

## «Ժղվանք»

«Ապայ ի՞նչ է, որ զրեալ և ի տեսիլ սրբոյ ուժեմն, թէ ի վերայ Վիրապին զոչէ հրեշտակապետն։

Պատ.— Դիոնիսիոս յասել է, թէ ամէն ազգի հրեշտակապետ կայ վերակացու հանդերձ հրեշտակաւը։ Արդ յայտ է, թէ ամէն հրեշտակապետ զիւր յանձնեալ ազգն կոչէ ձայնին յայնտեղն, ուր ազգին առաջնորդն շարշարանաւը ածեալ է զազդն ի հաւատս տեսան։ Եւ այսպէս Հայոց վերակացուն ի վերայ Վիրապին հնչեցեալ առ սուրբ Գրիգոր ժողովին Հայաստանեայք, և նայ ընդ իւր առեալ զհաւան վերանայ առաջի Քրիստոսի ասելով՝ թէ ահաւասիկ ես և մանկունք իմ, որո ետուր ցիս աստուած»<sup>55</sup>։

Վարդան Արենելցին շատ ուշադիր վերաբերմւնք է ցուցաբերել իր օգտագործած աղբյուրների նկատմամբ, քննադատաբար և պատասխանատվության զգացումով է մոտեցել նրանց, վերստուգել և վերաբնմաստավորել է դրանք։ Միմիայն վերջնականապես համոզվելուց հետո է ձշտել իր գիրքն ու տեսակետը։ Իզուր չէ, որ նա նշել է. «Շատ պատճառ տան, բայց հաւանականն այն է», «...այլ քննելի բան է», «Այն, որ տան թէ երեմիա ի Բարելոն է զնացել, չէ իրաւ...» ևն<sup>56</sup>։

Աղբյուրների առատությունն ու բազմազանությունը և նրանցից օգտվելու իր քննադատական եղանակը վկայում են հեղինակի գիտական բարեխղճության, լայն մտահորիզոնի և լեզուների իմացության մասին։

\* \* \*

«Ժղվանք» մեջ շոշափվում են բազմապիսի հետաքրքրական խնդիրներ։ Հիմնականում կրոնա-դավանարանական հենք ունեցող բազմաթիվ հարցերին հաղորդված է հասարակական-քաղաքական, գիտական և մշակութային արժեք։ Այնադեռ շարադրված են տվյալ ժամանակի համար առաջադեմ մտքեր ու տեսակետներ։

Վարդան Արենելցին հայ եկեղեցու դավանանքը անաղարտորեն ներկայացնելու դիտավորությամբ ու պատրվակով քննության է առնում առավելապես այնպիսի հարցեր, որոնք մանավանդ այդ օրերին, կրել են աղքային-քաղաքական բնույթ։ Նա չի հետազնդում սոսկ կրոնական նպատակ, այլ հետեւելով նոյնորդ նշանավոր հայ եկեղեցական գործիշներին, իր հայրենասիրական պարտքն է կատարում և անզիջում հետևազականությամբ պաշտպանում հայ ժողովրդի ազգային քաղաքական շահերը։ Նրա այսօրինակ ելույթը առանձնապես անհրաժեշտ էր տվյալ ժամանակաշրջանում, երբ Բյուզանդիան ու Վատիկանը փորձում էին ամեն կերպ շարաշահել Կիլիկյան հայկական թագավորության քաղաքական դժվարությունները։ Հեղինակը սրտառու դրուցում է Հեթում Ա-ի հետ։ Ահա թե ինչ է զրում նա այս առթիվ. «Եւ ի զառնազգեցիցդ զգուշացուր,

## «Հարցման և պատասխանիք»

«Հց.— Այն ի՞նչ է, որ տան, թէ ի վերայ վերապետ հարկանի։

Պատ.— Առասպել մի՛ համարիր, Դիոնիսոս ասել է հաստատ զՄուսէսի բան։ «Կացոյց սահմանս հեթանոսաց ըստ թվու հրեշտակաց, թէ ամէն ազգի հրեշտակապետ հրեշտակաւը վերակացու է, որ ազգին բոնն և զլուխն է, անդ հեշեցուցանէ, որ ազգին առաջնորդ է զիւր ժողովուրդն առեալ ընդ յառաջ երթայ Քրիստոսի ասելով, ահայ ես և մանկունք իմ...»<sup>56</sup>.

55 Զեռ. № 750, էջ 41ր։

56 Զեռ. № 5611, էջ 82ա։

57 Զեռ. № 750, էջ 102ա, 103ր, 105ր։

որ ընդ աստուծոյ և ընդ այնպիսի թագաւորին իւրեանց շմորեն, կամին և ընդ մեղ շմորիլ. իւրենք զիտեն: Թէ ընդ քեզ հաւատ հարցանեն և պահանջեն, զու հրամէ, թէ ևս զիմ առաջնորդացն ունիմ հաւատս և զիմ եկեղեցւոյն, և նոցա պարտիմ համարս տալ և ոչ ձեզ...»: Զգալի է այս խոսքերին հաղորդված ազգային ինքնազիտակցության և արժանապատվության շեշտը, որով տողորդված է «Ժղանքն» ընդհանրապես: Մի այլ տեղ նույն ոգով է տուամ. «Եթե ասեն թէ, ո՞ր ընութիւն է զոր զուր մի տէք և զոր ուրանալք, տսայ, թէ ուրացութիւն մեր շէ զործ ի վերայ ճշմարտութեան, այլ ձեր»<sup>58</sup>:

Այս տեսանկյունով «Ժղանքի» կրոնա-դավանաբանական նյութերի հասարակական գերն ու նշանակությունը շատ բարձր են: Բավարարվենք խոսելով նրանցից միայն մեկի մասին, որը ամբողջությամբ դավանաբանական բնույթի և շատ բնորոշ հեղինակի քաղաքական և հայրենասիրական տրամադրությունները դրսեորելու տեսակետից: Դա Հեթում Ա.-ին հղված հայտնի պատասխան թուղթն է, որի մասին արդեն խոսք եղել է քիչ վերև: «Պատասխան այդ թուղթը հայ դավանաբանական դրականության գլուխ գործոցը կարելի է համարել»—դրել է և. Խաչիկյանը<sup>60</sup>: Իր նպատակասլացությամբ, չերժ շնչով, սուր ու վճռական տրամադրությամբ այն բավական ազգեցիկ գեր է կատարել հայ միջնադարյան պատմության մեջ: Երբեմն ցասումով, երբեմն էլ կծու սրամտությամբ նրանում հերթված են կաթոլիկության հավակնոտ գոգմանները և նրա կողմից հայ եկեղեցու հասցեին ուղղված մեղադրանքների ամբողջ շարքը:

Պատմությունից հայտնի է քրիստոնեության գլխավոր կենտրոնների, այսպիս կոչված աթոռների, հատկապես Հռոմի և Բյուզանդիոնի հակամարտությունը «նախապատի» աթոռի իրավունքը սեփականացնելու համար: Որոշ է, որ այդ արվում էր, որպեսզի քաղաքական ավելի լայն ազդեցության ոլորտ ու զերիշխանություն ձեռք բերվեր: Խոկ այդպիսի հավակնության գեմ ծառանում է մեր հեղինակը՝ հեգնելով նրանց կրոնական հիմնական պատճառաբանությունը: Նա հարց է տալիս, թե ինչո՞ւ և ինչպե՞ս է, որ Հռոմը քրիստոնեության առաջին աթոռն է համարվելու: Եթե լոկ նրա համար, որ Պետրոս առաքյալը այնտեղ սպանվեց, ապա ի՞նչ պիտի ասել երուսաղեմի մասին, որտեղ խաչվել է ինքը՝ Քրիստոսը. «...ընդէ՞ր եղել Հռոմ առաջին. թէ զՊետրոս իւրենք սպանին ի Հռոմ, զՊետրոսի աստուածն հրէայքն սպանին յերուսաղէմ. Երուսաղէմ ընդէ՞ր չէ հրամանատու ամենայն երկրի»<sup>61</sup>: Ուշագրության արժանի են այս պարբերության մանավանդ վերջին խոսքերը, որոնք շատ հատկանշական ու բնորոշ են Հռոմի (Վատիկանի) քաղաքական հիմնական ձգտումը ընդգծելու համար: Այնուհետև նա դառնացած ժխտում է վերջնիս, այսպես ասած, «փրկար» տուարելությունը հայ ժողովրդի կյանքում: Ո՞ւր է, ե՞րբ է եղել այդ: Եթե վատիկանը նոր է հայ ժողովրդին կամենում «գտած» լինել իրեն քրիստոնյա ժողովուրդ, ապա նա շատ է ուշացած, խոկ եթե օգնելու և «փրկելու» (ոչ կաթոլիկական ըմբռնմամբ) ճտագրություն ունի, ապա խնդրեմ: Որա համար առիթներ շատ կան. «Ո և ի (620) զաւառ են հայք յեղնկայէն ի վեր, և կան որ աւեր են, և կան որ ի ծառայութեան. թէ կու ցաւին ընդ հայոց, թող երթան ա-

58 «Գիրք թղթոց», Միֆիս, 1901, էջ 509:

59 Զեռ. Ն 750, էջ 152ա:

60 և. Խաչիկյան, Կոստանդին Բարձրերդցու խրատական թուղթ... «Բանքեր Մատենադարանի», 1958, Ն 4, էջ 269:

61 «Գիրք թղթոց», էջ 504:

դատին և խաւսին ընդ հայոց վարդապետարանսն և ընդ դպրատունսն, որ ու բայց ով և խարէոթեամբ ուսուցանեն և ուսանին որպէս դոքա (կաթոլիկները — Փ. Ա.), այլ ձշմարտոթեամբ և հիմամբ առաջնոցն, և ապա գան առ մեզ<sup>62</sup>:

Հայ ժողովուրդը դարավոր պայքար է մղել Համասարապես և՛ Բյուզանդիայի, և՛ Վատիկանի ղեմ իր քաղաքական անկախությունը, ազգային դիմադր, ավանդությունները, լեզուն ուահելու համար: Նա ամեն կերպ ջանացել է, որ չնահանջի նրանց ոտնձգությունների և քաղաքական թելագրանքների առաջ և հակառակ դառն փորձություններին, նա չնահանջեց: Մեր Հեղինակը հայ եկեղեցու հակառակորդների մասին իր ասելիքը այսպես է եղրափակում. «Ապա զիւրեանց արուեստակեալ առասպելսն իսկի շրնդունիմք, այլև արհամարհեմք և շիշխեն ի վերայ մեր ամենին»<sup>63</sup>:

Կարծում ենք այսքանը բավ է ասելու համար, որ Վարդան Արենեցու «Ժղվանքի» մեջ տեղ գտած կրոնա-դավանաբանական նյութերը մեկը մյուսից առավել կամ նվազ շափով տոգորիված են Հայրենասիրությամբ, ազգային արժանապատվության զգացումով և քաղաքական հեռատեսությամբ: Հենց այս էլ նրանց պատմական արժեքն է և Հեղինակի թանկագին լուման հայ հասարակական մտքի պատմության մեջ:

Գնահատության արժանի են «Ժղվանքի» նաև այն նյութերը, որոնց մեջ արծարծված են բնափիլխոփայության վերաբերյալ մի շարք հարցեր:

Վարդան Արենեցին, լինելով միջնագորյան նշանավոր աստվածաբան վարդապետներից մեկը, իր սահմանադրությունների մեջ ամեն առիթով հաշվի է առնում աստվածաշնչի վերին Հեղինակությունը աստուծու և բնության փոխագարծ կատերը մեկնարանելիս: Սակայն, միաժամանակ, նա ուշագրավ և առաջավոր շատ մտքեր է արտահայտել առավելապես այն ժամանակ, երբ անդրադարձն է բնափիլխոփայական հարցերի: Այսպես օրինակ, զննելով բնությունը՝ նա եղրակացնում է. «Բնութիւն է սկիզբն շտրժման ու զավաթման»<sup>64</sup>: Նշանակում է նա բնությունը դիտում է անընդհատ շարժման, դադարի և փոփոխության մեջ: Բնությունից զուր ոչ շարժում կա, ոչ էլ հանգիստ: Հատկանշական է, որ նա այս շարժումը չի դիտում իրեն սոսկ տեղաշարժություն, այլ նաև, որուշ առումով, ներքին կերպարանափոխություն, մի բանից մյուսի անցումն, մի ֆիզիկական և որակական վիճակից մյուսի վերաճումն: Այս կապակցությամբ նո հետեւյան է գրել. «Բնութիւն է սկիզբն իւրաքանչիւր շարժման և կայանի, այսինքն երկիր շարժի ի բոյս, և ի կենդանիս և ի ճախ»<sup>65</sup>:

«Ժղվանքի» Հեղինակը նույնպես կարծում է, որ բնությունը կազմված է չորս հայտնի տարրերքից՝ չըից, Հողից, օղից և կրակից: Այս առթիվ Հետաքրքիր են նրա հետեւյալ խոսքերը. «...ոի շուր ցամաքեալ հող լինի, և հող զանցեալ՝ շուր. և շուր շեռեալ և հոր շիշեալ՝ օդ: Եւ հոր զշերմութիւն և զլոյսն ի բաց եղեալ՝ լինի երկիր, և օդ զխոնաւութիւն ի բաց եղեալ՝ լինի հոր»<sup>66</sup>:

62 ՀԴիքք Բղթոց, էջ 509.

63 Անդ, էջ 509:

64 Զեռ, 750, էջ 51բ:

65 Անդ, էջ 147բ:

66 Անդ, էջ 62բ:

Երկնային մարմինների ֆիզիկական կազմության վերաբերյալ նա ունի ուշագրավ տեսակետ, ըստ որի նրանք առաջացել են ինչ որ «մրրատեսակ» թանձրամածություններից, «եւ զայլ մրրատեսակ թանձրումն լէարկ (աստր-ված — Փ. Ա.) յաստեղացն նիւթն»<sup>67</sup>: Նա աներկմտորեն միանում է այն գիտ-նականներին, որոնք գտնում են, որ տիեզերքում շատ աստղեր կան ավելի մեծ, քան արևը, և եթե վորր են երեսում, այդ միմիայն հեռավորության պատճառով է, «Բայց ոմանք տանն, թէ աստեղը մեծամեծը են քան զորեգակն, բայց հեռագոյնը են և բարձր, գողանան զմեր տեսանելիս»<sup>68</sup>: Նա հավաստում է, որ ոչ բոլոր աստղերն են հրեղեն, այլ կան նաև այնպիսինները, որոնք «յոյժ ցրտագոյն են և ամեննեին ստուամանիք»: Նա խոսում է նաև երկնային մարմինները՝ յարժման մտսին, որոնք նրա կարծիքով, ընթանում են «ընտրութեամբ և ան-մոլար», դեպի «Հարաւ» և դեպի «Հիւսիս», երբեմն ազորիքի, երբեմն էլ՝ ա-նիվի նման, սակայն «Բ աւրն ընդ մի շամել շերթան»<sup>69</sup>:

Բուսական աշխարհի առաջացման մտսին նու այսպիսի հետեւթյան է, հանգել. «Բզիսեաց երկիր բերս բուսոյ անթուական բազմութեամբ և անսպառ զաւակօք, ոչ խառնարնդորս և մածուցեալս, այլ բազմորիշ ընտրութեամբ, տոհմաւ և աղգաւ, համով և հոտով, և զունով, և ձեռով, հասուկով»<sup>70</sup>:

Նա կյանքը բխեցնում է շրից. Թեև մյուս երեք տարրերի մասնակցությունն էլ այդ գործում անհրաժեշտ է, համարում: Բուլսը հողով միայն չի անի, այլ անհրաժեշտ է հատկապես չուրը, քանի որ վերջինիս մեջ տոկա են մյուս երկու տարրերը: Առանց շրի կյանքն անհնար է. «Ելին ի շրոյ լուղակը և թռչունը»<sup>71</sup>:

Վաղ շրջանի հայ բերականագիտության պատմության մեջ նշանակալից տեղ են բռնում Վարդան Արեելցու բերականական երկու աշխատությունները՝ «Մեկնութիւն բերականին» և «Վասն բանին մասանցը»: Թեև երկուսն էլ զըրվել են Հեթում Ա.-ի խնդրանքով, բայց մենք քննության կառնենք վերջինը, քանի որ միայն այն, ինչպես ձեռագրերի ուսումնասիրությունն է ցույց տալիս, «Ժղլանքի» անմիջական մասն է կազմում:

Քերականական այս երկասիրությունը բանասիրության մեջ, մանավանդ վերջերս, շատ բարձր է զնահատմել, որպես ուրույն, իր ձեռով հայ մատենագրության մեջ նախընթացը չունեցող արժեքավոր աշխատություն: Նրա մասին դիտողություններ են արել Լ. Խաչիկյանը, Գ. Զահուկյանը, Ս. Ղազարյանը, Լ. Խաչերյանը, իրենց վերոհիշյալ երկերի մեջ:

Իրապես, ինչպես նշվել է, այն մեր բերականական գրականության մեջ հայոց լեզվի շարահյուսության մասին գրված ինքնուրույն անդրանիկ գործն է: Նրանում, առաջին անգամ լինելով, խոսքի մասերը ըննված և ընորոշված են որպես նախադասության անդամներ, թեև նրանց տրված է ձեարանական կատեգորիաների անվանում: Պետք է նշել, որ այսական գիտականորեն ոչ մի շփոթ չկա: Եթե շարահյուսության և ձեարանական տերմինները որոշակիորեն չեն սահմանագատված, չի ճշտված յուրաքանչյուրի անվանումը, բայց զիտակցված է նրանց բնագավառը, նրանց տիրութը: Մեր հեղինակը խոսքի մա-

67 Զեռ. № 750, էջ 67ա:

68 Անդ, էջ 69ը:

69 Անդ, էջ 67ը, Հմմա. Հռովհ. Վանական պատճենագործության մասին, Առաջնապահան, ձեռ. № 5611, էջ 100ա:

70 Զեռ. № 750, էջ 65ա:

71 Անդ, էջ 71ը:

սերի ձևաբանական հատկանիշը երբեք էլ չի շփոթել նախադասության մեջ նրանց ունեցած ֆունկցիոնալ հատկանիշի հետ։ Նա, պարզապես, շարահյուսական ճշտված կամ արգեն բնդունված տերմիններ չինելու պատճառով, իր սահմանումները, իր սույն բնագավառի գիտելիքները արտահայտել է արգեն հայտնի և բնդունված ձևաբանական տերմիններով։ Այսուղ էտկանն այն է, որ հայերենի շարահյուսություն դրելու առաջին և կարեսը քայլն արված է<sup>72</sup>։

Հեղինակը նշել է խոսքի ուժ մաս՝ անուն, բայ, ընդունելություն, նախադրություն, մակրայ, գերանուն, հոդ և շաղկապ։ Այնուհետեւ նա համապատասխանաբար տալիս է յուրաքանչյուրի բնորոշումը, սահմանումը։

Սույն աշխատության մյուս կարեսը առանձնահատկությունն այն է, որ այն առաջին քերականական երկն է, որը զերծ է այս բնագավառոի նախորդ երկերին հատուկ ձարտասանական, մեկնողական, փիլիսոփայական և բանաստեղծական տարրերից և ներկայանում է իրեն զուտ քերականություն<sup>73</sup>։ Իր միտքը բացատրելու համար նա դիմում է ամենապարզ օրինակների, որոնք պերցված են անմիջականորեն ժողովրդական կյանքից ու միջավայրից, նշում է այնպիսի անուններ, ինչպես Ստեփաննոս, Թորոս կամ Վասիլ, որոնք ոչ միայն Կիլիկիայում շատ տարածված էին, այլ և որոշակի անձանց անուններ էին, որոնց ձանաշում էին և՛ հեղինակը և՛ Հեթում թագավորը այսուղ արդեն ի հայտ է, զալիս ոչ միայն առաջավոր գիտնականը, այլև մանկավարժը։

Ժողովրդական պարզ ու կենդանի խոսակցական լեզվի և ոճի տեղին ու վարպետ կիրառումը, այս փոքրիկ աշխատության մեկ այլ հատկանշական կողմն է<sup>74</sup>։

«Ժղվանքի» առավել արժեքավոր նյութերի թվում կան նաև այնպիսիները, որոնցում խոսվում է այն մասին, թե որ ժողովուրդներն են, որ ունեն գիր ու դպրություն, ինչպես տեղի ունեցավ հայոց գրերի գյուտը, ինչ են նշանագրերը, քանի զրքից է քաղկացած Աստվածաշունչը և այլն։ «Ժղվանքի» հեղինակը խորհրդածության նյութ է զարձրել նաև արվեստի բնագավառը՝ տաղաշափությունն ու երաժշտությունը։

Համաձայն այս նյութերի գիր ու դպրություն ունեցող վարդանին ծանոթ ժողովուրդների թիվը եղել է 15, չհաշված աղվաններին, վրացիներին, խոտայցիներին (չինացիներ), բուլվառներին (իմա բուլղար) և «այլք ևս»։ Թե ինչու է առանձնացրել վերջիններիս, որևէ պատճառ չի նշել նա, իսկ 15-ի մեջ զրավոր այլ աղբյուրների ցուցումներով ներառել է հետևյալ ժողովուրդներին՝ հայերին, երրայեցիներին, լատիններին, խոպանացիներին, հույններին, մարերին, հրեաներին, պարսիկներին, քաղցեացիներին, հնդիկներին, ասորեստանցիներին, փյունիկեցիներին, եգիպտացիներին, պանփիլացիներին, փոյուզացիներին<sup>75</sup>։

72 Գ. Զահուկայան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V—XV դդ.), Երևան, 1954, էջ 245—255։ Լ. Խաչերյան, Հայ շարահյուսագիտական մտքի վաղ շրջանի պատմությունից, «Բանքեր Մատենադարանի», 1962, Ա 6, էջ 113—115։

73 Լ. Խաչերյան, Վարդան Արևելցու «Վասն բանին մասնաց» աշխատությունը, «Տեղեկագիր», ՍՍՀՄ Ակադեմիայի հայկ. Ֆիլիալ, Երևան, 1960, էջ 86։

74 Ս. Ղազարյան, Միջին հայերեն, Ա գիրք, էջ 85։

75 Զեռ, Ա 750, էջ 115ա։ Հմմտ. Հովհաննես Վարդմունք և պատասխանիք, Մաշտոցյան մատենադարան, ձեռ. Ա 5611, էջ 70ա։

«Ժղլանքի» բազմավաստակ հեղինակը հայոց գրերի պյուտի մասին խոսել է՝ բազմից «գրեթե իր բոլոր կարեւոր աշխատությունների մեջ։ Այս պարագան վաղուց է իր վրա հրավիրել բանասերների ուշադրությունը։ Բանն այն է, որ գրերի պյուտի վերաբերյալ նրա հազորդումները զգալի շափով տարրերվում են նախորդ հիմնական աղբյուրների՝ Կորյունի, Մ. Խորենացու, Դ. Փարավեցու հազորդած տեղեկություններից և ունեն իրենց ուշադրության արժանի կողմերը։

Ինչ վերաբերում է առանձնապես «Ժղլանքում» եղած համապատասխան հատվածին, պետք է ասել, որ չի կարելի այն զանց առնել Մեսրոպ Մաշտոցի դործունեության, հայոց գրերի պյուտի պատմության, գրերի ձեր և բանակի, ուսար այրութենների հետ ունեցած այս կամ այն առնչության և հարակից խնդիրները դիտական ամբողջական հետազոտության ենթարկելիս։

Հիշյալ հատվածում տրծարծված են հետեւյալ հիմնական հարցերը։

1. Հայերը ունեցել են նախամեսրոպյան գիր։
2. Դրանք քիչ են եղել և պահպիլ են Դանիելի մոտ։
3. Մեսրոպը ևս զնացել է Դանիելի մոտ նրա հետ դործակցելու և առորական տառերը բազմակողմանիորեն ուսումնասիրելու համար։
4. Ասորական 22 տառերից Մաշտոցը «թարգմանել» է 17-ը և 5-ը թողել, որովհետեւ «եփ ջանալին թէ թարգմանենը բատ մեր լեզուիս, շդայր ի բան այն ե զիրն»<sup>76</sup>։
5. Մաշտոցը գտնում է ոչ միայն 6, այլ 19 գիր, որոնցից 6-ը ձայնավոր և 13-ը բազաձայն։
6. Ա զիրը ասորականից չի «թարգմանել», որովհետեւ նրանում ան աչք, այլ աւ-է, իսկ չ զիրը «թարգմանել» է։

Առաջին և երկրորդ կետերի վերաբերյալ իր տեսակետները հեղինակը ոչ մի նոր տվյալով չի հիմնավորում, բայց ասորական 17 գրերի այսպես կոչված «թարգմանության» մասին նախապես ոչ ոք չի խոսել։ Ի՞նչ պետք է հասկանալ, եթե նա «թարգմանել զգիրս» է տառմ։ Մեր կարծիքով՝ գրերի փոխառության մասին խոսք անգամ լինել չի կարող։ Այստեղ պարզապես նկատի է տռնված զրանց հնչութային արժեքը, այսինքն այն, որ ասորական այդ 17 գրերը կարող էին արտահայտել հայերեն համապատասխան 17 հնչույթներ։

Ի վերջո Մաշտոցի հանճարեղ գործի առավել դժվարին բաժինն այն էր, ինչպես նշել է Գ. Սեակը, որ իր մայրենի լեզվի բազմաթիվ հնչույթներից տարբերիր թվով շատ ավելի սահմանափակ հնչույթները<sup>77</sup>։ Եթ այս խնդրում ասորական (և ոչ միայն ասորական) գրերը կարող էին օգտակար լինել։ Դարձյալ բացառաբար տառերի հնչույթային արժեքը նկատի ունի մեր հեղինակը, եթու տառմ է, թե «չգայր ի բան այն Ե զիրն» — բանի որ հայերենում նրանք շեն ունեցել համապատասխան հնչույթներ։ Ուստի և մերժվել են։ Միևնույն մոտեցումը կա հայերեն ա տառի ասորականից «թարգմանված» լինելու կարծիքը մեջ, որովհետեւ, ինչպես նշել է նրբանկատ մեր հեղինակը, «ասորոցն, աւ է», այսինքն չի համապատասխանել մեր ա հնչույթին<sup>78</sup>։

76 Զեռ. N 750, էջ 116ա։

77 Գ. Սեակը, Մեսրոպ Մաշտոց..., Երևան, 1962, էջ 29։

78 Զեռ. N 750, էջ 116բ։

Այս է պատճառը, որ Մաշտոցը չգոհացավ միայն ասորական գրերի ուսումնասիրությամբ։ Հայերենում կային ավելի հնչույթներ։ Նոր որոնումներ էին պետք, որպեսզի ավելի հանգամանորեն ուսումնասիրվեր հայերենի հնչույթին համակարգը, վերջնականապես ճշտվեին նրա բոլոր հնչույթները և միայն հետո հորինվեին ու ձեմի բերվեին տառապատկերները։ Եվ ահա Մաշտոցը, ըստ Վարդան Արեւելցու, ճշտում է նաև մյուս 19 հնչույթները։ Այս առիդ «Ժղվանքում» նշված 19 համապատասխան տառերը բավարար հիմք են տալիս ասելու, որ իրոք Մաշտոցը օտար տառերի հետ «հաշվի է նստել», առանձնապես նրանց հնչույթային արժեքը նկատի ունենալով և ոչ գծագրական հատկանիշները կամ գրելակերպը։ Իսկ այդ նշանակում է, որ նա իրապես հայերենի հնչյունային համակարգը ևս համեմատել է ասորերենի, հունարենի և այլ լեզուների հնչյունային համակարգի հետ։ Աշխատանքային այս եղանակը հնարավոր գարձրեց նրա հանձարեղ գյուտը, քանի որ նա վերջնականապես պարզեց, թե որոնք են հայերենի հիմնական հնչույթները, առավելապես նրանք, որոնք հատուկ են հայերենին։ Եվ մեր հեղինակի համաձայն, նշված 19 գրերը ասորականում շունեն իրենց համապատասխանը։ Ահա նրանք. ձայնավորներ՝ ա, ե, ո, ի, ր, ւ, բաղաձայններ՝ բ, զ, դ, ծ, ձ, Շ, Չ, Վ, Գ, Շ, Ւ, Յ, Փ։ Սակայն, ինչպես նկատում ենք, այս տառերից մի քանիսին համազոր հնչույթով տառեր իրականում ունեն ասորիները։ Ուրեմն, Վարդան Արեւելցին, դոնե մտամբ, սխալվում է։ Բայց գիտենք, որ Արեւելցին ծանոթ էր ասորերենին և չէր կարող այսպիսի տարրական սխալ թույլ տալ։ Արդյո՞ք այս փաստը կարու չէ այլ բացատրության։ Ինչպես հայտնի է, երկար, զեռ շճշտված ժամանակներից ի վեր, մեր գրերից մի քանիսը՝ բ-պ, զ-կ, ծ-ձ, Շ-Չ, Վ-Թ, տարրեր ձևով են հրնշվում։ Արևմտահայ արտասանությամբ բոլորովին հակազարձ պատկեր է ստացվում՝ պ-ն իրեն հնչույթ փոխարինում է բ-ին, կ-ն՝ զ-ին, ծ-ն՝ ծ-ին, Շ-ն՝ Շ-ին, ա-ն՝ դ-ին։ Արդյո՞ք զեռ այն ժամանակ Կիլիկիայում այսօրվա արևմտահայ արտասանությունը չի եղել։ Մեր կարծիքով Արեւելցու վերոհիշյալ հազորդումը գալիս է հաստատելու մեր ենթադրությունը։ Եվ, իրոք, եթե խնդրին այս տեսանկյունից մոտենանք, գրեթե ամբողջությամբ նրա ասածները ձիշտ կլինեն։ Հայտնի է, որ ասորական այրութենի մեջ մեր ներկու արտասանությամբ շկան պ, կ, ծ, Շ, ա և այլ մի քանի գրեր և եթե նրանք փոխարինենք արևմտահայ արտասանությամբ համապատասխան հնչույթներն արտահայտող տառերով, այսինքն պ-ի փոխարեն գրենք բ, կ-ի փոխարեն՝ զ, գրեթե նույնությամբ կստանանք վերոգրյալ տառերի շարքը։ Մեր ենթադրությամբ բացատրության կարու են մնում միայն ի, ծ, Շ գրերը։ Հայկական և ասորական ա տառերի օրինակով տեսնում ենք, թե ինչքան բծախնդիր է մեր հեղինակը տառերի հնչույթային արժեքի նկատմամբ։ Գուցե և այդպիսի նույր տարրերություն եղել է նաև այս երեք գրերի հայերեն և ասորերեն արտասանության մեջ։ Ինչ վերաբերում է շտառին, ապա պետք է ենթադրել, որ թերեւ ձեռագրերում այն շփոթվել է դ-ի հետ, ինչպես այլ դեպքերում շատ է պատահել։

Այսպիսով «Ժղվանքի» հիշյալ հատվածը, մեր կարծիքով, հիմնականում պատմում է գրերի գյուտի, Մեսրոպ Մաշտոցի գործելակերպի, օտար տառերին դիմելու նրա նպատակի, հայոց և ասորիների գրերի առնչությունների (ըստ որում առավելապես հնչույթային արժեքի տեսակետից), Կիլիկիայում մեր այցուրենք արևմտահայ արտասանությամբ հնչելու հարավորության մասին։

Նկատի առնելով կարևորությունը՝ ստորև մեջ ենք բերում «Ժղվանքի» հայերեն գրերի գլուխին վերաբերող հատվածը՝ ամրողությամբ:

«Եւ ո՞ր են գրերն զոր պարզեցաց աստուած:

Պատ. Այս են՝ Զ գիր ձայնաւոր և ժԳ անձայն: Եւ ձայնաւորքն են այս՝ ա, ե, ո, ի, թ, ւ, և անձայնքն են այս՝ թ, զ, ժ, ծ, ծ, ձ, շ, չ, պ, ց, շ, ն, յ, փ, ընդամեն ժԹ: Եւ այս են ճշմարտապէս ստուգիւ գտեալ, զի ասորիք ընդ մեր թագաւորօքն էին և նոցայն իթ գիր է, ի նոցանէ շանացան առնել մեզ զիր: Եւ լեալ էր Հայերէն նշանագիր ի Հին ժամանակն սակաւ և զի շկարէին բանել նորօք՝ թողին և մոռացաւ և եփ զարձեալ ի խնդիր եղեն, զտաւ առ Դանէլ անուն տսորի եպիսկոպոս, և Սահմակ Մեսրովը առաքեցին զԱրէլ անուն էրէց ասորի և երեր: Զի շրերէր լիով զհարստութիւն լեզւիս, զնաց զարձեալ Մեսրոպ առ նոյն Դանէլ էպիսկոպոս և սակաւ ինչ աշխատ եղեն և շկարացին ինչ աւելի շահիլ, զի առաջինն ի նոցանէ էր առած ժէ զիր, զի և զիրն թողեալ էր և շէր թարգմանեալ, եփ շանային թէ թարգմանենք ըստ մեր լեզուիս, շդայր ի բան այն և զիրն: Ապայ յաղաւթս ապաւինեալ տեսանէր մարդարէական աշօք թաթ ձեռին աջոյ որ գրէր ի վերայ վիմի և ամենայն հանգամանքն որպէսութիւնքն տրապաւորեցաւ ի սիրտքն և վազվազակի ստեղծանէր ժե զիր. և այն որ է տեսն, վասն նոցա պատուականութեան ասեն, որ ձայնաւորք են և որպէս Հոգի են ալլոցն: Եւ ընդէ՛ր տսեն է, զի Զ է ձայնաւորն. զի է զիրն կայր յասորոցն և նայ զայն էտ ի Դանիէլ Մեսրոպ, վասն որոյ զայն այլ նմայ տսեն, բայց ի մարդոյ օգտեցաւ: Զա, զէ զիրն, և զժթ զիրն յաստուծոյ, և վասն զրոյն առաւել պիտանութեան զէ մէն տսեն և զովեն, և զժթ լլիշեն: Այլ զայս հաստատ տես և թէ տսեն, թէ ալփայն այլոցտ կայ, է՛ր շառնուին. տսեմք թէ տսորոցն աւ է, որ է՛ ո և այրն այս է, և շկայ: Եւ ալլրդ զի ունին, բայց այլ [կ]երպին, մերն յաստուծոյ ձեացաւ արինակն, այս առանց կարձեաց է»<sup>79</sup>:

Ինչպես տեսանք, «Ժղվանքը» առնշություն ունի նաև Հայկական նշանագրերի կամ՝ «Նշանագիրք իմաստնոց»-ի հետ: Դիտել ավինք նաև, որ այնտեղ եղած նշանագրերի հայտնի ցանկը, որի մեծ մասը համառոտագրություններ է, ամենայն հավանականությամբ մաս է կազմել «Ժղվանքին»: Ուստի նա պատկանում է Վարդան Արեկեցու գրչին և ժԳ զարից այն կողմ չի անցնում:

Առաջին հայացքից իսկ նկատելի է, որ ցանկի մեջ կան և՛ նշանագրեր, և՛ Համառոտագրություններ: Առաջինները ձեւած են զանազան զծապատկերների տեսրով, երկրորդները՝ Հայկական բոլորզի հիման վրա: Վերջիններս Հորինվել են, Հավանաբար, ժԹ զարից հետո, երբ բոլորզիրը Համեմատաբար ավելի լայն կիրառում է գտնում մեր ձեռագրերում, ուստի նրանք ուղղակի կապ չէին կարող ունենալ Հայկական բուն նշանագրերի հետ: Իսկ առաջինները ոչ մի ձեւական աղերս չունեն Հայկական զրերի հետ և, անշուշտ, մասամբ, Հայկական հնագույն նշանագրերի մնացորդ նմուշներն են: Բայց ինչպէ՛ս: Եթե իրոք հմայագրերում եղած նշաններից զոնք մի մասը մեր հնագույն նշանագրերից կարող են լինել, ինչպես ենթադրվում է, ապա այդ որոշակի է, բանի որ վերջիններին, հիշյալ ցանկի և ձեռագրերում եղած այլ և այլ նշանագրերի խմբերի միջև նմանությունն ակնհայտ է<sup>80</sup>:

79 Մատենադարան, ձեռ. 750, էջ 115ր:

80 Հ. Կ. աշխարհագրական գրի Հարցը և Հմայագրերը, Պատմա-բանասիրական Հանդես, 1963, ԱՌ 4, էջ 157:

Կազմելով իր նշանագրերից ցանկը Վարդան Արևելցին, Հավանաբար, ոչ  
միայն հավաքել է նշանագրերը, այլ նշել մի մասի նախկին նշանակությունը,  
մի մասն էլ իմաստափոխել, այսպես ասած՝ «Քրիստոնեանացրել»<sup>81</sup>: Իսկ  
համառոտագրությունները, հավանական է, որ մեծ մասով իր կողմից հորին-  
ված լինեն:

Այսպիսով, քանի որ նրա ցանկի և հայկական հնագույն նշանագրերի միջև որոշակի կապ կա և եթե զալիք ուսումնասիրություններով հաստատվի, որ այդ ցանկի մեջ մասամբ պահպանված են վերջիններիս նախկին բուն նշանակությունները, ապա կարելի է հույս ունենալ, որ նրանք կարող են նպաստել նշանագրերի վերծանության գործին:

«Ժղանքում» երաժշտությունը թեև հատուկ ուսումնասիրության նյութ չի դարձել, սակայն վերջինիս վերաբերյալ նրանում տեղ գտած հաղորդումները հետաքրքրությունից զուրկ չեն հայ երաժշտության պատմության և բանասիրության տեսանկյունից:

Հիմնականում կրկնելով Ստեփաննոս Սյունեցուն, մեր հեղինակը հայտնում է, թե ո՞վ է կատարել ձայների տեսակների առաջին դասակարգումը, ո՞ր երաժիշտը ինչպիսի՛ նվազարան է պատրաստել, Ա. Բ. Գ. Դ. «ձայներն» ու «կողմերը» ովքեր են ճշտել, ծնծղաւ, տավիդ, քնար, փողային նվազարաններն ովքեր են գործածել, և այլն: Մրանք թեև երաժշտության պատմության ամենանախնական տեղեկություններից են և երաժշտական դիտելիքների առաջին նշույններից, սակայն, հատկապես, ավագ ժամանակաշրջանի համար ունեցել են իրենց տեղն ու նշանակությունը:

Երաժշտությունը իրրև արվեստի առավել ներգործուն ճյուղ և հնարք շատ վաղուց է կրոնական հայտնի դործիչների ուշադրությունը հրավիրել իր վրա և կիրառվել եկեղեցական պաշտամունքային ծիսակատարությունների ժամանակ։ Հայ եկեղեցին ևս իր սկզբնավորության իսկ օրից որդեգրել է երաժշտությունը, քանի որ «...Զիք ինչ, որ զկամս մեր հեղաշրջէ յուրախութիւն կամ ի տրամութիւն, որպէս զերգոյն ձայն, յորժամ որպէս պարտն իցէ՝ լինիցի. վասն այսուրիկ և եկեղեցական աւանդութիւն ընկալաւ զսոյն յարտաքնոցն»<sup>82</sup>։ Հաստատելով երաժշտության կիրառման անհրաժեշտությունը, եկեղեցին շեր կարող միաժամանակ որոշ վերապահություն շանել։ Զէ՞ որ երաժշտությունը միշտ էլ ունեցել է իր տարբեր բնագավառները և բնույթը։ Այս երևույթը եկեղեցին նկատել է։ Նա, իրրև ժամանակի պրոֆեսիոնալ երաժշտության միակ ներկայացուցիչը, բնականորեն և անհրաժեշտաբար իր ուշադրությունը պիտի կենտրոնացներ ժողովրդա-զուսանական երաժշտության առավելագեն լեզվա-ոճական ամենակենսունակ հատկությունների վրա։ Դրանցից բացի եկեղեցին երաժշտությունից քաղելու էր իր էության, միշտավայրին և նպատակներին համապատասխան տրամադրություններ։ Դրանք և՛ պիտի հեռու պահեին իրենց այսպիս կոչված «աշխարհականացումից», և՛ ավելի տպավորիչ ուներգործուն պիտի ուղարձնեին եկեղեցական երաժշտությունը հավատացյալների համար։

Այս նկատառումով հայ եկեղեցու ականավոր զործիներից ոմանք անհրաժեշտ են ստել աշքաթող շանել հայ աշխարհիկ երգն ու երաժշտությունը։ Այս

81 Sb'u  $\delta$ ln. № 750,  $t_9$  126 m.

82 Ն. Բահեմական էլեկտրական հայկական երաժշտական դեղագիտությունից, «Էլեկտրական», 1963, № 11, էջ 54:

տեսակետը մեր հեղինակը ներկայացրել է հետեւու պարբերությունը. «...եւ վասն է՝ թառնեաց ձայնս և նուազս ի բանս հոգուոյն Դաւիթ... պատ. յաղաղս Բ պատճառի, առաջին, զի սատանայի զիւտ էր քնարաւոր և տաղաւոր իգացուցանել զմարդիկ, խառնեաց զայն ի բանս հոգուոյն Դաւիթ, զի սրբեցէ, և իւր զինուուրն խոցուուեցէ զինքն և հալածեցէ, որպէս ի Սաւուղայ, և Բ զի քաղցրածայնութեամբն կաշառեալ մարդիկ և հեշտացեալ՝ զանխըլարաք ուսցին զհողէխառն բանսն»<sup>83</sup>. Այս տողերից ուղղակիորեն հետեւու է, որ եթե Դավիթ մարդարեն որդեպրեց նվազը, որը նույնիսկ «սատանայի զիւտ էր» իր աշխարհիլ ծագումով ու բնույթով, որպեսզի «քաղցրութեամբն... ուսցին զհողէխառն բանս-սըն», ապա, ինչո՞ւ հայ եկեղեցին զդիմեր միևնույն քալին:

Այսպիսով Արևելցին փաստորեն առաջադրում է կամ թելադրում, որ հայ եկեղեցին համարձակորեն ձեռք մեկնի աշխարհիկ երաժշտությանը, այն օգտագործի իր նպատակների համար: Հասկանալի է այս երեւյթի առաջադիմութան նշանակությունը:

Նա «Ժղանքի» մի այլ հատվածում եկեղեցական երաժշտության կամ երդեցողության հետ առնչվող հետեւյալ տողերն է գրել. «Զաւետարանն յառջի-ձայնէ պատեհէ է կարդալ և զառաքեալն՝ յերրորդէ, զմարգարէան՝ ի շորորդէ. և կարդացողին նմանցնել պիտի զիւր խօսքն զրոցն ասողին և պատճառին՝ թէ խրատական է, թէ աւաղական է, թէ ըղձական է, թէ սպառնական է, թէ ողոքական է, և այլ այսպիսիք»<sup>84</sup>: Այսուղ երկու հիմնական և արժեքավոր հարցեր կան, որոնք վերաբերում են եկեղեցական երաժշտության ծիսական կատարման և իմաստավորման զեղագիտական կողմին: Մեկում խոսքն այն մասին է, թե ո. Գրքից եկեղեցում ընթերցվածներ կարգալիս՝ երբ ի՞նչ ձայն պետք է օգտագործել: Պարզվում է, որ զոնե տվյալ ժամանակաշրջանում Ավետարանը, առաքելոց թղթերը, մարգարեւթյունները պատահական եղանակով կամ ուշիտատիվ շեն ընթերցվել, այլ յուրաքանչյուրի համար սահմանված է եղել որոշակի մի ձայնեղանակ: Այս շատ կարևոր հաղորդում է հայ եկեղեցու ծեսն ու երաժշտությունը ուսումնասիրելու համար, մանավանդ, այժմ, երբ վերջիշխալ կարգը շի պահպանված:

Երկրորդում խոսվում է այն մասին, թե ինչպես պետք է կատարել և մեկնարաննել երաժշտությունը: Նախ անողղակիորեն ընդգծվում է, որ այն միաւարչ և պետք չէ լինի, ապա թելադրվում, որ այն կատարվի եղանակավորված ընազրի իմաստի կամ տրամադրության համեմատ, ըստ այդմ՝ խրատականըղձական, սպառնական և այլն:

Նշված սույն փաստերը զկայում են, որ Վարդան Արևելցին, եթե ոչ առաջինը, զոնե առաջիններից մեկն է, որ հայ եկեղեցական և աշխարհիկ երաժշտության փոխադարձ մերձեցման հարցն է առաջազրել<sup>85</sup>:

Իսկ ինչ վերաբերում է մեջ բերված երկրորդ պարբերության՝ եկեղեցում ո. Գրքի ընթերցվածների ձայնեղանակների և երաժշտության կատարման կեր-

83 Զեռ. 750, էջ 113ա:

84 Անդ, էջ 119ա:

85 Ն. Թահմբայանի հիշյալ հոգվածում (էջ 54) նշված է նաև մի անանուն հեղինակ, որի մոտ նույնպես կա Դավիթ մարգարեի մասին վերօգրյալ հաղորդումը: Բայց մեր որոնումներից պարզէց, որ այդ հեղինակը Գր. Տաթևացին է, քանի որ մատնանշված աղբյուրը նրա «Գիրք հարցմանցի» մի մասն է:

աի մասին, ապա, պետք է ասել, որ այն ավելի համառոտակի առկա է Հովհ. Վանականի «Հարցմունք և պատասխանիք» աշխատության մեջ<sup>86</sup>:

«Ժղվանքի» բաղմաժանը միավորների թվում կա նաև տաղաշափության մասին մի հատված, որ մեզ ենք բերում ստորև:

«Տաղական բանին ցոյցը.

Իմաստնոյ չէ փոյթ տաղական առնել, զի հոգիածու բանն չունի զայն հոգն, բայց խմայելացիքն պատուեն. ասեն թէ սուստանն Խոսրովի Բանեա յովի սիրէր զտաղական բանն, որ է յոտանաւոր: Եւ յաւորս նորա նօտար մի Խոսրով անոն, որդի Մութանարեայ արար յօտանաւոր մի և մատոյց սուստանին, իսկ նա յոսկոյն արարացոց Եֆ-ան Մ գեկան կարմիր տրկ ի վերայ նորա: Եւ արա այսպէս. թէ զայրն զնես առաջք և յերկարես զրանն յեզն փոխէ, իսկ զոտքն թէ ինի զնես և յերկարես և փոխել կամիս ւ իւն դիր, որ է իւն ւ, այս հեշտ է: Բայց ի յե ք վճարելն դժւար է: Եւ արայ այսպէս. խոստովանիմք զաստուած և ը, անսկիզբն և մի բնութիւն և ը, անձինք Գ ի փառս միաւորս և ը, յոշէից արար դաշխարհս և ը, և զեղամ հողանիւթեայ իշխան նոցա և ը, իսկ ը ասելն միադիր վանգ է և կոչի զարմացումն: Մի՛ համարիր զայս ընդ վայր, և տէրն փառք»<sup>87</sup>.

Նվազ հետաքրքրություն չեն ներկայացնում «Ժղվանքում» տեղ գտած 7 մանր հրաշապատում զրուցները: Նրանք մեր զեղարվեստական արձակի անգրանիկ նմուշներից են<sup>88</sup>:

Նրանք ունեն ոչ բարդ, սահուն շարադրանք: Կառուցվածքով պարզ են, ունեն փոքր սյուժեներ, զուրկ են մի շարք այլ հրաշապատումներում հանդիպող ավելորդապաշտությունների ձանձրալի ողողումներից: Քանիցս կրկնված տրամախոսությունները, որոնք զերծ են ճարտասանական արվեստակալ դարձվածքներից, և զեսքերի համեմատարար աշխույժ ընթացքը նրանց հաղորդում են թարմություն և կենդանություն: Թվում է, թե հեղինակը ընթերցողին հրապուրելու և կամ տրամադրելու ոչ մի ջանք չի թափում: Նա ոչ մի ավելորդ արտահայտչական ու ձևական հնարանքի չի դիմում ընթերցողին իր հույզերը անպայման հազորդելու և իր նպատակը նրան պարզելու համար: Սակայն, օժտված լինելով հանդատրաստից ծնված մտերիմ զրուցի ընականությամբ և պարզամտությամբ, նրանք ավելի շուտ են հասնում ընթերցողի գիտակցությանն ու զգացումներին:

Լեզվա-ոճական առումով էլ նրանք ընական են ու անբռնազրոսիկ: Նրանց ոճը շունի կրոնա-դավանաբանական նյութերի ավանդական խրթնությունը, անպաճույժ է, ճարտասանական շինծու դարձվածքներից ազատ ու կենդանի, իսկ լիզուն, որ լիքն է միջին հայերենի տարրերով, հասարակ է, նույնիսկ անմշակ, բայց սահուն և մատշելի:

«Ժղվանք» շարադրելիս Վարդան Արենելցին, ավելի բան իր մյուս աշխատություններից որևէ մեկում, դիմել է միջին հայերենին և ժողովրդական լեզվի միջոցներին:

86 Մաշտոցյան մատենագարան, ձեռ. № 5611, էջ 57ր:

87 Ձեռ. № 750, էջ 165ր: Հմմտ. Հովհ. Վանական մատասխանիք, ձեռ. № 5611, էջ 78ր:

88 Ձեռ. № 750, էջ 45ա: Այս զրուցները նույնությամբ են. Գանձակեցին զետեղել է իր պատմության մեջ: Տե՛ս կ. Գ անձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 348—355:

Արևելցու ստեղծագործությունների մեջ միջին հայերենի կիրառման փաստերի և նրանց բնորոշ հատկանիշների խնդրով մենք զբաղվելու ենք այլ առիթով։ Այժմ գոհանանք մի քանի նմուշների սոսկ հիշատակությամբ, որոնք բառել ենք միայն Ժղանքից, զեթ թեթևակի պատկերացում տալու նրանում հեղինակի օգտագործած «ռամկորենի» ընդհանուր լիճակի մասին։ «Եւ այս աղուր է», «զգայարանք յստակ էին, մեզօք չէին բթել», «եւ այնշափ մաշեալ է, որ լեզուն մեն է մնացել», «գիտեալ և զայս, զի Մովսէս նահապետ կայ անանուն, չէ յիշել, ընդ մէջ է թողել, իսկ Ղուկաս աւետարանիշ յիշել է, որ գիտենանք, թէ ի սուրբ Հոգուոյն զրեցին աւետարանիշըն», «Լսէ, կու ասէ, թէ», «Աղէկ և մտաւոր հասկցիր» և այլն<sup>89</sup>:

«Ժղանքը» հազեցած է լեզվական այսպիսի նմուշներով, որոնք հեղինակի լեզվին ու ոճին հաղորդել են նոր որակ, նոր ձև՝ պարզ, աշխատված և անմիշտական։

Ամփոփենք: «Ժղանքը» մեր միջնադարյան գրականության հետաքրքրական երևութներից մեկն է։ Այն համայնագիտական ծավալուն մի երկասիրություն է բնության, երկնային մարմինների, մարդու, նրա հոգեկան և իմացական գործունեության, լեզվի, քերականագիտության, հայկական նշանագրերի, գրերի գյուտի, երաժշտության և այլ հարցերի մասին։

«Ժղանքը» շատ քիչ է ուսումնասիրված, չունի ոչ մի հրատարակություն, միայն առանձին քաղվածքներ են լույս բնծայվել նրանից։ Երկար ժամանակայն ամենաշատ գնահատված ու սիրված գրքերից մեկն է եղել, ընդօրինակվել է ԺԳ—ԺԹ դդ. բազմաթիվ ձեռագրերում և լայն տարածում գտել։ Թեև ուշ շրջանի ձեռագրերի մեջ «Ժղանքի» բնագիրը բավականաշափ աղճատված է, մի քան, որ որոշ շփոթությունների առիթ է տվել, սակայն հնագույն մի քանի ձեռագրերում պահպանված է իր ընդհանուր կառուցվածքով ու ծավալով։ Զեռապրական մի շարք տվյալների համաձայն այն բաղկացած է շուրջ 70 մանր նյութերից։ Այն զրկել է Հեթում Ա. թագավորի համար արդյունաշատ Վարդ. Արևելցու կողմից, Կիլիկիայում, 1240—1248 թթ.։

П. П. АНТАПЯН

### «ЖХЛАНК» ВАРДАНА АРЕВЕЛЦИ

#### Р е з ю м е

В богатом литературном наследии видного летописца Вардана Аревелци определенное место занимает его работа «Жхланк» (беседы, полезные знания), написанная в 1240—1246 гг. для киликийского армянского царя Хетума I. Предметом специального исследования эта работа становится впервые.

Этот примечательный труд сохранился в многочисленных копиях, древнейшая из которых относится к 1274 г. Эта и ряд других рукописей дают возможность уточнить структуру и объем «Жхланка». Выясняется,

<sup>89</sup> Զեռ. № 750, էջ, էջ 58ա, 85ր, 87ր, 95ր, 96ր, 107ա։

что он состоит из 70 небольших отдельных материалов богословского, естественно-философского, космографического, общественно-политического, культурного, литературно-художественного, грамматического, музыковедческого содержания.

Не менее ценные и те отделы «Жхланка», которые относятся к межгосударственным политическим отношениям армянского народа с Византией и Ватиканом.

Одна из характерных черт «Жхланка» его ясный, простой стиль и почти разговорный язык.

P. P. ANTABIAN

### LE „JEGHLANK“ DE VARDAN AREVELTSI

Le „Jeghlank“ (mémento ou lectures récréatives) de Vardan Aréveltsi composé pour le roi d'Arménie Héthoum I en 1240—1246, occupe dans le riche héritage littéraire de son auteur une place particulière. Le présent article en est une première étude.

Le texte nous est parvenu en plusieurs copies dont la plus ancienne remonte à 1274, troisième année de la mort de Vardan. Cette dernière nous est précieuse quant à la structure et à l'étendue de l'ouvrage composé de quelque 70 questions se rapportant à la théologie, la philosophie, l'astronomie, les sciences sociales et politiques, l'art, la littérature, la grammaire, la musique.

Les passages consacrés aux relations internationales de l'Arménie avec Byzance et le Vatican ne sont pas sans intérêt.

Le „Jeghlank“ est d'un style sobre et dépouillé qui s'apparente au langage parlé.



ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԿԴԱՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆ

№ 8

1967

ՌԱՖԱՅԵԼ ԽԵՂԱՆՅԱՆ

ՀԱՅ ՀՆԱԳՈՒՅՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Քանասիրական հետազոտությունների ժամանակ քիչ չեն այն դեպքերը, երբ որևէ հարց ձշտելու նպատակով իրքի կովան օգտագործվող հանրահայտ դրույթը սխալ է դուրս գալիս: Այդպես եղավ, երբ Հակոբ Մեղապարտի անունով հայտնի գրքերը այլ հարցի կապակցությամբ ուսումնասիրելին՝ անսպասելիութեն պարզեցինք, որ սխալ է եղել նրանց տպագրման մինչև վերջերս ընդունված հաջորդականությունը և Պարզատումարն իրքի հայ առաջին տպագիր դիրք համարելը: Այս ճշտումը, որ հրապարակվեց «Բանբեր Մատենադարանի», № 7-ում<sup>1</sup>, որու եղբակացությունների և ենթադրությունների տեղիք տվեց հայ տպագրության մկրնավորման վերաբերյալ:

Հակոբյան գրքերի տպագրման ժամանակագրությունը որոշելիս մեր ձեռքի տակ շկար նրանցից մեկը՝ Պատարագատեատր-ը: Քանի որ բանասիրության մեջ հակոբյան հինգ գրքերից երկուսը հաստատ ընդունված էին իրքի թվակիր Պարզատումար-ը՝ 1512-ի, Պատարագատեատրը՝ 1513 թվականի հրատարակություններ, և բանի որ մեր ձեռքի տակ եղած գրքերից մեկը թվական ունեցող դիտված Պարզատումար-ն էր, ուստի և մենք միանգամայն հիմնավոր էինք համարում նրա 1512-ը մի ելակետային թվական համարելն ու ըստ այդմ որոշ եղբակացություններ անելը: Բայց այժմ, երբ երուսաղեմի մեր հայրենակիցների բարյացակամությամբ Մաշտոցի անվան մատենադարանն ստացավ Պատարագատեատր-ի մանրապատկեր ժապավենը, պարզվեց, որ այդ գրքի բացակայությունը ավելի նշանակալից է եղել մեր զննումների գործում, քան կարելի էր ենթադրել, և այդ կապակցությամբ անհրաժեշտ է դառնում մի բանի դիտողություններ անել:

Երեսնում եղած հակոբյան շորս հրատարակությունների տպագրման հերթականությունը մենք որոշել էինք այդ գրքերի մեջ էջախորագրերի համար օգտագործված ժապավենաձև շրջանակների տեսակները, գործածության հաջորդականությունը և մաշվածության աստիճանը նկատի առնելու միջոցով: Ցույց էինք տվել, որ շորս գրքերի մեջ օգտագործված են 24 ժապավենաձև շրջանակներ, որոնք իրենց ձևավորման ոճով 3 խմբի են բաժանվում: Այսինքն՝ գրքերի մեջ բազմիցս դրոշմված երեք ութնյակ շրջանակներից յուրաքանչյուր ութնյակը իր առանձին ոճն ունի: Այսպիս նորբարագրքի մեջ դործածված են իրարից տարրեր, բայց ձևավորման ոճով ընդհանուր ութ շրջանակները<sup>2</sup>: Աղբարք-ում գոր-

1 «Բանբեր Մատենադարանի», 1964, № 7, էջ 275—293.

2 Անդ, նկ. 3-ը (1—8 համարների շրջանակները):